

181

Fuentes

Chrysolina, 4/24/54

82-15
F-29

P. 1285



652008



82-93  
F-99

**Բ Ա Ո Ւ Է Ն**

82-93

F-99 ա

**ՓԱՅԼՈՒՆ ԿՈՊԵԿ**

(Մանկական վեպ)

Թարգմանեց

**ԳՐԻԳՈՐ ԾԱՅՐՈՒԴԱՂԵԱՆ**

1269  
7



Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարան Մովսիսի Վարդանեան.

1885

6

7

7



677

2 2

U. B.

# ՓԱՅԼՈՒՆ ԿՈՊԵԿ

(Մ ա ն կ ա կ ա ն վ ե պ)

Ա.

Քուցէ ընթերցողներիցս շատերը ոչինչ գաղափար չունին Բօանգ-Կօրտ թաղի և նորա թշուառ բնակիչների մասին: Լօնդոնի խուլ փողոցներում այնպիսի գետնափոր տներ կան, որոնք բոլորովին զուրկ են լոյսից և մաքուր օդից: Այդտեղի աղքատ բնակիչները շատ անմաքուր են ապրում: Հալալ քրտինքով չը կամենալով իրանց օրական ապրուստը ճարելու, նորա մեծ մասամբ գողութեամբ են պարապում: Ամենայն օր ծեծը, հայհոյանքը, կռիւր անպակաս է այդ տեղ: Ահա այդ թաղը կոչվում է Բօանգ-Կօրտ:

Բօանգ-Կօրտի մի խոնաւ և մութ գետնափոր տանը ծնուեցաւ Իիկ-Նէյսօն մանուկը՝ մեր պատմութեան հերոսը: Նա այդ տեղ ապրում էր և մեծանում մինչև տասներկու տարեկան հասակը: Թէ թնչպէս էր նա ապրում, թնչով էր կերակրվում և թնչ էր հագնում, զժուար է երևակայել:

Дозволено цензурою. Тифлисъ, 7 Февраля 1885 г.

Типография М. Вартамянца Тройц. пер. д. № 11.



Նորա մայրը առաջ շատ աշխատասէր և բարի աղջիկ էր և ծառայում էր մի մանրավաճառի տանը, բայց յետոյ դժբաղդաբար պսակուեցաւ մի գինեմոլ մարդու վրայ. պսակուելուց յետոյ մարդն այնպէս անձնատուր եղաւ արբեցողութեան, որ զրկուեցաւ իւր առաջուայ լաւ տեղից, և հետզհետէ այնքան աղքատացաւ, որ հին շորեր, կօշիկներ, ոսկորներ, թղթի կտորներ հաւաքելով ու ծախելով, հազիւ էր կարողանում մի կտոր հաց ճարել: Թէ և այս գործն էլ կարող էր շատ օգտուէտ լինել, բայց թէ ինքը և թէ իւր կինը այնպէս սաստիկ հարբում էին, այնքան քիչ փող էին խնայում սև օրուայ համար, որ դոքա շատ հազիւ էին կարողանում ճաշել, և ինչ որ ձեռքն էր ընկնում, այն էին ուտում. էլ ինչ ասել կուզէ, որ տան սարգ ու կարգը շատ վատ էր: Հայրը ամենեւին ուշք չէր դարձնում որդու վրայ, իսկ մայրը թէ և սաստիկ սիրում էր իւր երեխային, բայց գինեմոլութիւնը չէր թոյլ տալիս նորան իւր մայրական պարտաւորութիւնը կատարելու: Ահա այսպիսի տանն էր մեծանում մանուկը:

Իիկը շատ գեղեցիկ և ուրախ երեխայ էր, բայց նորան տեսնողը առանց ծիծաղի չէր կարող նայել նորա վրայ: Խեղճին այն մաշած շորերն էին հագցնում, որ հայրը չէր կարողանում ծախել փողոցում, էլ ինչ ասել կուզէ, որ շորը երեխայի վրայ լաւ չէր նստում. որովհետև շատ անգամ այնպէս նեղ էր լինում, որ խեղճ երեխան քիչ էր մնում ճխլուի. իսկ երբեմն այնքան լայն և մեծ, որ հազիւ կարողանում էր մանգալ: Բայց մանուկը շորի մասին ամենեւին չէր մտածում.

անցորդներն էլ աւելի նորա սևորակ աչիկներին ու սիրունագանգրահեր գլխին էին նայում, քան թէ նորա շորին:

Իիկի մանկութեան առաջին տարիները շատ լաւ անցան: Հէնց որ մանգալ սովորեց թէ չէ, Իիկն էլ, ինչպէ՞ս ամեն երեխայ, սկսեց ցելից կարկանդակներ, լաւաշներ ու հողէ տներ շինել. ասպա զնդախաղի ժամանակը հասաւ: Գնդախաղն էլ այնպէս սիրում են մանուկները, որ նոցանից ամենաաղքատն անգամ կարողանում է իւր համար գնդակ շինել. այնուհետև Իիկը դարձաւ փողոցի տղայ. նա իւր ընկերների հետ ամբողջ օրերով փողոցներումն էր թափառում, և զեղեցիկ զարգարուած խանութների առաջև կանգնած, զարմանքով նայում էր սիրուն խաղալիկներին, կամ մրգավաճառի խանութի առաջ դարսած կարմրաթուշ խրնձորներին ու դեղնագոյն նարինջներին նայելիս, բերանի ջուրն էր զնում: Եթէ Իիկի կամ սորա ընկերների ձեռքը մի քանի կոպէկ էր ընկնում, այն ժամանակ էլ նոցա ուրախութեանը չափ չը կար: Իսկոյն վազում էին խանութ և առնում էին իրանց սիրած քաղցրաւենիքը կամ թթուաշ նարինջը:

Բայց Իիկը ամենից շատ սիրում էր Կօվէնտ-Հարդէնի վաճառանոցը գնալ և ժամերով կանգնած նայել հիւսնալի ծաղիկներին, որոնց մանկութիւնից արդէն սիրում էր:

Այդ վաճառանոցում ծախում էին մրգեր, ընդեղէններ և ծաղիկներ: Իիկը համարեա՞ ամեն օր այդտեղ էր անցկացնում իւր ժամանակը, այնպէս որ մրգավաճառները նորան լաւ էին ճանաչում: Երբեմն մի նա-



րինչ կամ մի խնձոր տալով, գործի էին ուղարկում նորան. իսկ եթէ երեկոյին էին գործի ուղարկում, ընծայում էին նորան նա և թառամած ծաղիկների փնջեր: Նա սիրում էր այդ ծաղիկների փնջերը տուն տանել և դնել կոտրած ծաղկամանում, որ առաւօտուն զարթնելիս, զմայլուի նոցանով:

Հէնց այդ ժամանակ Կովէնտ-Հարդէնի վաճառանոցի մօտ մի փոքրիկ տնակում բնակվում էր ծերունի Քոմասը: Նա երիտասարդ հասակում ծառայում էր մի հարուստ պարոնի տանը, բայց երբ ծերացաւ, բարի պարոնը նշանակեց ծերունուն փոքրիկ թոշակ նորահաւատարիմ ծառայութեան համար: Բացի սորանից, Քոմասը միշտ վաճառանոցումն էր լինում, և զանազան լանձնարարութիւններ կատարելով բաւական փող էր աշխատում: Ծերունին մենակ էր ապրում. նա մի քանի տարի առաջ զրկուել էր կնոջից, իսկ նորա միակ 12 տարեկան որդին ծաղկով մեռաւ:

Ծերունի Քոմասը միշտ վաճառանոցում լինելով, չէր կարող չը նկատել փոքրիկ Դիկին, որը շատ նման էր իւր մեռած որդուն: Բայց գուցէ ծերունին երբէք էլ չը խօսակցէր Դիկի հետ, եթէ չը պատահէր հետեւեալ անցքը, որը կը պատմենք մեր ընթերցողներին:

Մի երեկոյ մի մրգավաճառ կին կամենալով տուն գնալ, սկսեց խնձորները կողովը դարսել, բայց կողովը շուռ եկաւ և խնձորներն այս ու այն կողմը գլորուեցան: Դիկը շատ մօտ էր կանգնած և իսկոյն սկսեց օգնել կնոջը խնձորները հաւաքելով. խեղճ կինը շատ էր ափսոսում, որովհետև խնձորները շատ լաւ տեսա-

կիցն էին և այդ պատճառաւ էլ շատ թանգ էր ծախում: Մի քանիսը գլորուեցան մեծ սեղանների ու քթոցների տակ և Դիկը մտաւ որ հանէ: Խնձորները դուրս հանելիս, նա երեք խնձոր իւր մեծ զրպանը գցեց: Թէ և Դիկը չէր տեսնում, բայց նորանից շատ մօտ կանգնած էր Քոմասը: Ծերունին նկատեց, որ Դիկը խնձորները զրպանը գցելուց առաջ իւր չորս կողմը նայեց, որ իմանայ թէ իրան արդեօք ոչոք չէ տեսնում: Ծերունին սկսեց հետեւել նորան: Նա տեսաւ, թէ ինչպէս մանուկը բերից հաւաքած խնձորները կնոջը տուեց, ինչպէս կինը շնորհակալութիւն արաւ և բերած խնձորներից մէկն էլ երեխային ընծայեց:

Արդէն շատ ուշ էր և Քոմասը պիտի տուն գնար. բայց երբ երեխային միտն էր բերում, շատ էր վշտանում, մանաւանդ որ մանուկը շատ նման էր ծերունու մեռած որդուն: Ծերունին այսպէս էր մտածում. «Ես հաւատացած եմ, որ այս մանուկը բազրի բերմունքին թողած այն թշուառ արարածներից մէկն է, որոնք չեն հասկանում թէ թնչն է չարն ու բարին»: Նա չէր ուզում տեղն ու տեղը երեխային գողութեան մէջ մեղադրել, բայց նոյն իսկ մանկան համար վնասակար էր համարում նորա արարմունքը առանց ուշադրութեան թողնելու: «Ո՞վ է իմանում, ասում էր ծերունին, մանուկը կարող է գողութեանն ընտելանալ և վատ կը վերջացնի իւր կեանքը. սխր սուտ չի ասած թէ «ձուի գողը, — ձիու գող կը դառնայ»». բայց եթէ հիմիկուց նախագգուշացնենք նորան, դորա պէս աշխոյժ մանուկը գուցէ զեռ կարողանայ բարի և ազնիւ մարդ դառնալ»:



Մինչդեռ Դիկը անոյշ անոյշ կծոտում էր մրգավաճառ կնոջից ստացած համեղ խնձորը և մտածում էր, թէ դեռ էլի երեք անգամ պէտք է նոյն բաւականութիւնն ունենայ, մի ձեռք դիպաւ նորա ուսին. Դիկը վեր թռաւ և տեսաւ Թոմասին:

— «Ես քեզ հետ խօսելու ունիմ, մանո՛ւկ, ասաց ծերունին. արի՛ գնանք իմ տուն թէյ խմենք»:

Դիկը նայեց ծերունու երեսին և տեսաւ, որ թէ և նորա ճակատը կնճիւններով էր ծածկուած, բայց շատ բարի տեսք ունէր: Մանուկը չը վախեցաւ և վստահ հետևում էր նորան: Խեղճը այնքան ուշ ուշ էր արժանանում թէյ խմելու բաղդին, որ թէյի անուճը լսելիս, բերանի ջուրը գնաց: ձանապարհին ծերունին հարց ու փորձ էր անում երեխային, թէ ո՞րտեղ է բնակվում, թէ՛ն է նորա անունը, ունի՞ հայր և մայր և ինչո՞վ են պարապում, և Դիկը համարձակ պատասխանում էր ծերունուն: Այսպէս քաղցր գրոյց անելով, նոքա հասան ծերունու բնակարանը:

Թէ և ծերունու սենեակը շատ հասարակ էր սարգած, բայց Դիկը երբ իրանց աղքատիկ խրճիթն էր մտաբերում, կարծում էր թէ պալատումն է նստած:

Սենեակի մէջ տեղը դրած էր բոլորակ սեղան, մի ուրիշ քառակուսի սեղան դրած էր անկիւնում, որի վրայ դարսած էին մի քանի գրքեր. սենեակի միւս անկիւնում դրած էր փայտեայ մահճակալ, իսկ մահճակալի մօտի պատից կախ էր արած հին պարոնի ընծայած վագրի մորթիւ, որը ցերեկը զարգարում էր

սենեակը, իսկ ձմեռուայ ցուրտ գիշերներին տաքացնում էր ծերունու սառած մարմինը:

Ծերունին նստեցրեց երեխային աթոռի վրայ, և տուեց նորան մի պատկերազարդ գիրք, որ նայելով ժամանակ անց կացնէ, իսկ ինքն սկսեց թէյ պատրաստել: Մանուկն աւելի նայում էր ծերունուն, քան պատկերներին:

Ծերունին առաջ կրակ վառեց, ապա պղնձեայ թէյամանով ջուր բերեց և գրեց կրակի վրայ. լետոյ բացեց պահարանը, հանեց թէյամանը և երկու բաժակ, հաց և կարագ: Այս ամենը կարգին դարսելով, նա գնաց իւր տան մօտի խանութը և բերեց երկու կտոր տապակած միս, (այդ խանութում ամեն տեսակ ուտելիք ծախում էին): Երբ թէյամանով ջուրը եռ եկաւ, ծերունին թէյը ածեց մէջը. տաքացրած տապկոցի անուշահոտ բուրմունքով ամբողջ սենեակը լցուեցաւ: Դիկի բերանի ջուրը գնում էր և անհամբեր սրտով սպասում էր, թէ երբ պէտք է թոյլ տան իրան ուտելու: Աերջապէս ծերունին ասաց. «Որդե՛ակ, անուշ արն»: Մանուկը կրկնել չը ասեց խնդիրը, իսկոյն մօտ քաշեց աթոռը և երբ ուզում էր պատառը բերանը գնել, ծերունին ասաց նորան. «Կանգնիր, որդե՛ակ, առաջ աղօթք անենք»: Ծերունին սովորութիւն ունէր սեղան նստելուց առաջ միշտ աղօթել: Դիկը զարմացած նայում էր, թէ թէ՛նչպէս ծերունին ջերմեռանդ աղօթում է: Մանուկը իւր կեանքում այսպիսի բան չէր տեսել և այս շատ զբաղեցնում էր նորան: Բայց համեղ խորովածը, կարագով հացը և քաղցրահամ թէյը շուտով ամեն բան մոռաց-



նել տուին նորան: Բարի տանտէրը ինքը շատ քիչ էր ուտում, միայն սաստիկ ուրախանում էր, երբ տեսնում էր, որ իւր փոքրիկ հիւրը մեծ ախորժակով է ուտում: Բարեսիրտ ծերունին վշտանում էր, որ շուտով պէտք է խօսէր մանկան հետ նորա գողութեան մասին:

Նրբ թէյ խմելն աւարտեցին, մաքրասէր ծերունին խօսոյն լուաց բաժակները, ամանները, թէյամանը և ամենը դրեց իրեն տեղը. ապա դարձաւ երեխային այս խօսքերով.

— «Որդեակ իմ. ես քեզ մի բան պէտք է ասեմ, որ քեզ համար շատ ծանր է լսել. դու գրպանումդ խնձորներ ունիս. այդ խնձորները դու գողացար մրգավաճառ կնոջից: Դիկ, գողութիւնը վատ բան է, իսկ դու արդեօք գող չե՞ս»:

Փոքրիկ գողի գէմքը փոխուեցաւ, ականջներն ու այտերը կարմրեցան. նա շատ լաւ իմանում էր, որ գողերին սովորաբար սպասում է բանտը և արդէն սկսեց կասկածել, որ չը լինի թէ ծերունի Թոմասը շորը փոխած ոստիկան է, և ուրեմն ինքն արդէն բռնուել է. բայց միևնոյն ժամանակ մանուկը զարմանում էր, որ ոստիկանը պատժելուց առաջ, այսպիսի քաղցր թէյ խմեցրեց իրան: Ծերունին սպասում էր պատասխանի. իսկ երեխան ճարահատուած ուզում էր մի սուտ հնարել, որ կարողանար ազատուել և ասաց, որ նոյն իսկ մրգավաճառ կինը ընծայեց նորան խնձորը:

— «Ո՛չ, Դիկ. նա քեզ միայն մի խնձոր ընծայեց և այն էլ կերար»:

Դիկը հետզհետէ աւելի շփոթուեցաւ և երբ իմա-

ցաւ, որ ծերունուն ամեն բան յայտնի է, սկսեց լալ և աղաչել, որ իրան արձակէ: Բարի ծերունին գրկեց մանկանը և ասաց, որ ինքն ամենևին չէ ուզում ո՛չ պատժել, ո՛չ էլ մէկին յայտնել նորա գողութեան մասին: Եւ սրբելով երեխայի արտասուենքները, շարունակեց. «Այո՛, որդեակ. թէ և ես ոչ ոքին չեմ ասիլ, բայց Աստուած տեսաւ քո արարմունքը և նա կը պատժէ քեզ, եթէ չես ուղղուիլ»:

Թոմասը երկար բարակ խրատում էր երեխային և հասկացնում էր նորա վատ արարքը: Կամաց կամաց զղջման արտասուենքներ սկսան փայլիլ երեխայի աչքերում, որովհետև նորա անմեղ և քնքոյշ սիրտը դեռ բոլորովին չէր փչացել: Նա հանեց գրպանից գողացած խնձորները և խնդրում էր ծերունուն վեր առնել:

— «Դոքա իմս չեն, որդեակ, ասաց ծերունին. ես ի՛նչպէս կարող եմ վերցնել»:

— «Ուրեմն ես դուրս կը ձգեմ պատուհանից», ասաց Դիկը:

— «Այդ էլ անկարելի է, ասաց Թոմասը. դոքա քոնը չեն և դու իրաւունք չունիս դուրս ձգելու»:

Դիկը շփոթուած չէր իմանում ինչ անի:

— «Ես կարծում եմ, որ դու պէտք է վերադարձնես խնձորները մրգավաճառ կնոջը, ասաց ծերունին: Ես գիտեմ, որ նա բարեսիրտ է, և գուցէ կը ների քեզ քո յանցանքը: Եթէ չիրաւի վշտանում ես, որ գողացար, դու ուրախութեամբ կը վերադարձնես. խնձորներն ինձ մօտ թող. վաղը կը գաս, և մենք միասին կերթանք



վաճառանոց և կը վերադարձնենք խնձորները մրգավաճառ կնոջը:

Դիկը խոստացաւ միւս առաւօտ գալու և միթարուած սրտով վերադարձաւ տուն, ճանապարհին մտածելով և զարմանալով իւր տեսածի ու լսածի վրայ:

Առաւօտը զարթնելիս, Դիկը տեսաւ պատուհանի վրայ ծաղիկներ: Բայց նա այնքան շփոթուած էր, որ այս անգամ չը կարողացաւ նոցանով զբաղուիլ. իւր խղճի խայթը անգաղար յիշեցնում էր նորան իւր երեկուան արարմունքը: Եւ եթէ նա աղօթել գիտենար, գուցէ իւր շփոթուած մտատանջութիւնը այս խօսքերով յայտնէր.

— «Տէր Աստուած, Դու որ ստեղծեցիր այս ծաղիկները, օգնիր ինձ, որ ազնիւ մարդ դառնամ. ես այլ ևս չեմ ուզում գողանալ և սուտ խօսել»:

Թոմասը շատ ուրախացաւ, երբ միւս առաւօտ սենեակը մտաւ Դիկը. ծերունին կասկածում էր, որ մանուկը չի վերադարձնիլ խնձորները: Բայց Դիկի գալը ցոյց էր տալիս, որ նա զղջացել է իւր արածի վրայ և եկել է պատիժ կրելու: Որովհետեւ շատ ծանր է մարդու համար գնալ և խոստովանել յանցանքը. թէ և ազնիւ մարդը աւելի ծանրութիւն է զգում իւր սրտում, քանի որ չէ խոստովանել իւր չարութիւնը:

Մրգավաճառ կինը սաստիկ զարմացաւ, երբ Թոմասը մօտենալով նորա սեղանին, յայտնեց որ Դիկը կամենում է վերադարձնել նորան այն երեք խնձորը, որ երեկ գողացել է: Խեղճ Դիկը մի խօսք անգամ չէր կարողանում ասել, որովհետեւ սաստիկ վախենում էր,

թէ մրգավաճառ կինը կը պատժի նորան: Բայց կինը ժպտալով պատասխանեց, թէ ինքը յոյս ունի, որ մանուկն այլ ևս չի գողանալ և երբ կամենում էր գողացած խնձորներից մէկը ընծայել երեխային, ծերունին չը թողեց և շտապով հեռացրէց նորան այդ տեղից: Նա խիստ էր և չէր ուզում, որ անկեղծ խոստովանութիւնը խնձորով վարձատրուի:

Երեկոյեան, երբ կինը պատահեցաւ Թոմասին և հարցրեց երեխայի մասին, ծերունին պատմեց բոլորը:

— «Բայց մի՞թէ մեծ մեղք է գործել խեղճ մանուկը, ասաց կինը. պատահմամբ երեք խնձոր է գտել և գցել զրպանը, ուրիշ խօսչինչ»:

Ծերունին մի լաւ նայեց նորա երեսին և գլուխը շարժելով ասաց. «Խնդրեմ լաւ մտաբերիր, քոյրիկ, թէ ինչո՞ւ համար Ադամն ու Եւան դրախտից արտաքսուեցան. չէ որ միայն մի խնձորի համար, ուրիշ խօսչինչ»:

— «Ե՛հ, ձեզ հետ ո՞վ կարող է վիճել, և ճշմարիտ, դուք այնքան կարգացած էք, որ այդպիսի բաները ինձնից լաւ էք հասկանում»:

Այս միջոցին մօտեցան սեղանին գնողները և կրտրեցին նորա խօսքը:

Բ.

Այն օրուանից Դիկն ու Թոմասը բարեկամացան. մանաւանդ Դիկի նման անտէր անտիրական մանկան համար թանգ էր ծերունու բարեկամու-



Թիւնը: Թոմասը յայտնեց երեխային, որ այսուհետև կարող է շուտ շուտ իւր տուն գալ. ծերունին գնեց նորա համար այբբենարան և սկսեց կարդալ սովորեցնել: Դիկը աչքաբաց և սրամիտ երեխայ էր և շուտով սովորեց տառեր գրելը և բառեր կարդալ: Ծերունին գնեց նոյնպէս մի գեղազրութեան տետրակ: Դիկի թանաքոտ մատները պարզ ցոյց էին տալիս, որ աշակերտն ու ուսուցիչը մեծ եռանդով են աշխատում: Եւ որքան ուրախացան երկուսն էլ, երբ Դիկը գեղեցիկ և անսխալ գրեց իւր ազգանունը իւր ընթերցարանի կազմի վրայ:

Բացի գրել կարդալուց, Դիկը սովորեց նոյնպէս լաւը վատից զանազանելը, որ երբէք չէր կարող իւրեանց տանը սովորել: Մանկան բազդից ծնողները երբէք չէին հարցնում, թէ ո՞ւր է կորչում ամբողջ օրերով և ի՞նչ է անում: Կիւրակի օրերը նա փոխանակ առաջուայ պէս փողոցներում թափառելու, Թոմասի հետ միասին եկեղեցի էր գնում:

Այսպիսով ժամանակն անցնում էր, Դիկը մեծանում և Թոմասը մտածում էր, թէ ինչ գործ ճարի նորա համար: Մանկան աղաբան այնքան էր զբաղում բարի ծերունուն, որ մէկ անգամ անձամբ գնաց Բօանդ Կօրտ խօսելու նորա ծնողների հետ. բայց դժբաղբար Դիկի ծնողներն այդ օրը հարբած էին, ուստի և չը կարողացան ծերունուն մի որոշ պատասխան տալ: Երբ ծերունին տեսաւ այս թշուառ ծնողներին, աւելի ևս ցաւեցաւ դժբաղդ մանկան վրայ: Նա չը գիտէր թէ երեխային ինչպէս օգնի. ինքն այնքան փող չու-

նէր, որ իւր հաշուով պահէր երեխային, և մի այնպիսի բարերար էլ չէր ճանաչում, որը խնամէր և պահպանէր նորան: Նա խորհուրդ արաւ իւր տան տիկնոջ հետ, միայն սա էլ պատասխանեց, որ մանուկները շատ են ձանձրացնում և քանի փոքր են, վնասից աւել ոչինչ օգուտ չեն տալիս»: Տանտիկինն ուղիղ էր ասում, որովհետև ինքն էլ երկու որդի ունէր, և չը գիտէր թէ ի՞նչ անի: Բայց և այնպէս Թոմասը շարունակում էր սովորեցնել երեխային և ամեն կերպ աշխատում էր որ մանուկը բարի և ազնիւ մարդ գառնայ:

Մի առաւօտ Դիկը աննպատակ ման էր գալիս Ստրանդ փողոցում իւր ընկեր Լարկինզի հետ: Նոքա կանգնեցան մի զբախանութի առաջ և պատուհանից նայում էին պատկերազարդ գրքերին: Այս միջոցին խանութին մօտեցաւ մի ձիաւոր, որ չորս կողմն էր նայում, կարծես թէ ուզում էր գտնել մէկին, որը իւր ձիու սանձը բռնէր, մինչև ինքը խանութից դուրս կը գար: Դիկը մօտ վազեց և յայտնեց որ ինքը կարող է ձիու սանձը բռնել: Պարոնը նայեց մանկան ուրախ դէմքին և տուեց նորան սանձը ասելով. «Դէհ, պըստիկ, պահիր ձիս, մի վախենար, չի կծիլ»:

Պարոնը զբախանութում զանազան գրքեր էր ընտրում: Նա մի երկու անգամ դուրս նայեց, և տեսնելով որ Դիկը ամուր բռնած ունէր ձիու սանձը, ժպտալով ներս էր մտնում: Դիկը շատ հաւանեց պարոնի ուրախ և բարի դէմքը:

Երբ պարոնը դուրս եկաւ խանութից և ուզում էր ձի նստել, զբախանից հանեց թղթում փաթաթած սև



փող և տալով Դիկին, ասաց. «Ա՛ւ, պստիկ, այդ էլ քո աշխատութեան վարձ. ես չը գիտեմ այդտեղ որքան է, բայց ինչքան շատ լինի, այնքան քեզ համար լաւ է»:

Հէնց որ պարտնը ձի նստաւ և ուզում էր հեռանալ, խանութից դուրս եկաւ գործակատարը և ինչ որ հարցրեց: Պարոնը բարձրաձայն պատասխանեց. «Գրովենէր փողոցը. № 5» և գնաց:

Դիկը շտապով բաց արաւ թուղթը և ապշած մնաց, երբ տեսաւ որ պղնձէ դրամների հետ մի ոսկի դրամ կար:

Նա իւր կեանքում միայն երկու անգամ էր տեսել ոսկի դրամ, այն էլ ձեռքին չէր բռնել: Նորա ընկեր Լարկինզն աղաղակեց.

— Օ՛հօ, պարոնը քեզ ոսկի դրամ է ընծայել. այ քեզ բաղդ»:

Դիկի ուրախութեան չափ չը կար:

— «Գիտե՞ս ինչ կայ, սատանի ճուտ, ասաց Լարկինզը, որը սրտով ուզում էր Դիկի հաշուով ճաշել. դու փողոցում շուտ շուտ մի երեւացնել այդ փողը, թէ չէ անցորդները կ'ասեն թէ գողացել ես. մեզ պէս աղքատ մարդոց մը է սեցրել ոսկի դրամը. և մէկ էլ, գիտե՞ս ինչ կայ եղբայր, դու քո հօրն էլ չ'ասես, թէ այդպիսի բաղդի ես արժանացել. թէ չէ գլխիդ խփելով փողդ կառնեն և օղիի կը տան: Աստուած վկայ, ուղիւն եմ ասում»:

Դիկն այլ ևս բան չասաց, փողերն առաջուան պէս փաթաթեց և գրպանը դրեց:

— «Լսիր, Դիկ, շարունակեց Լարկինզը, ինչ ես

կարծում, չը գնանք ամենից առաջ մօտիկ պանդոկը ճաշելու»:

Այս խօսքերը լսելիս, քաղցած Դիկի ախորժակը բացուեցաւ. նա թէ և գիտէր որ շատ համեղ կը լինի խորոված միսը գետնախնձորով, բայց երբ մտածեց, որ այս փողերը իւրը չեն, խորը ախ քաշելով ասաց.

— «Չը կարծեմ որ պարոնը ցանկանար ինձ ոսկի դրամ ընծայել. նա ասաց որ թղթի մէջ միայն սե փող կայ, և ես հաւատացած եմ, որ նա չը գիտէր, թէ այն տեղ ոսկի էլ կար»:

— «Եթէ նա սխալուել է, ուրեմն քեզ համար տւելի լաւ: Էլ ինչ ես մոլորուել, գնանք էլի»:

Կար ժամանակ, որ Դիկը այսպիսի դիպուածում Լարկինզից աւելի լաւ չէր կարող դատել, բայց այժմ նա անազնութիւն էր համարում ուրիշի ունեցածը սեփականել:

— «Ես կը ցանկայի վերադարձնել պարոնին ոսկի դրամը, ասաց Դիկը: Եթէ այդ փողը ինձ մօտ պահեմ, միևնոյն է թէ ես գողացել եմ»:

— «Ի՞նչ, վերադարձնել: Գժուել ես, ինչ է, զարմացած աղ շակեց Լարկինզը, մանաւանդ որ սրտով էլ ցանկանայիր, չէիր կարող, որովհետեւ չը գիտես թէ պարոնը որտեղ է կենում»:

— «Ի՛նչպէս չը գիտեմ, պատասխանեց Դիկը. նա ինչ որ հրամայեց ուղարկել իրան Գրովեններ փողոցը, № 5: Ուրեմն նա այնտեղ է կենում»:

Լարկինզը սաստիկ անբաւական էր Դիկի լիմար գիտաւորութիւնից և տեսնելով որ այլևս լոյս չը կայ



Համեղ ճաշ ուտելու, սկսեց ծաղրել նորան և հազար ու մի անպատիւ խօսքեր ասել, բայց ի գոհ: Վերջապէս խեղճ Դիկը իւր անպիտան ընկերից ազատուելու համար գնաց Թոմասի մօտ, որից ուզում էր խորհուրդ հարցնել. բայց ծերունուն տանը չը գտաւ: Դիկը գնաց վաճառանոց որոնելու նորան, բայց ծերունին այնտեղ էլ չէր:

— «Ես հաստատ հաւատացած եմ, որ ծերունին կ'ասէր, թէ «փողերը պէտք է վերադարձնել պարոնին. ուրեմն այս ըսպէիս գնամ և վերադարձնեմ», ասաց մանուկն ու գնաց:

Թէ և Դիկը լաւ էր ճանաչում Լօնդոնի փողոցները, բայց որովհետեւ քաղաքի արեւելեան կողմը շատ քիչ էր եղած, այդ պատճառաւ էլ հարց ու փորձ անելով, հազիւ կարողացաւ գտնել Գրօսվեներ փողոցը:

Երկար որոնելուց յետոյ, երբ վերջապէս տան Ձը գտաւ, քիչ մնաց զարմանքից խելքը գնար, այնքան մեծ և գեղեցիկ էր իւր փնտրած տունը: Դրները շատ գեղեցիկ և ամուր էին, իսկ զանգակը այնպէս բարձր էր շինած, որ երեխայի ձեռքը չը հասաւ նորան, որ հնչեցրել էր: Նա չը գիտէր թնչ անի. բայց վերջը մտածեց, թէ լաւ չէ, որ իւր պէս պատառոտած շորերով աղքատը այդպիսի շքեղ տան դրանը կանգնի: Եւ ուրեմն աւելի լաւ կանէ, որ մեծ գրնովը ներս մտնի: Այսպիսով երբ խոհանոցին հասաւ, նա սիրտ չէր անում բաղխելու դուռը. վերջը մանուկը կամաց բաղխեց, բայց ոչ ոք չներևաց: Մի փոքր յետոյ դարձեալ բաղխեց, բայց աւելի սաստիկ. դուռը բացուեցաւ և

նորա առաջ դուրս եկաւ մի աղջիկ և հարցրեց թէ թնչ է ուզում:

— «Ես ցանկանում եմ տեսնել պարոնին. նա ասաց որ այստեղ է բնակվում», պատասխանեց Դիկը:

Աղջիկը զարմացաւ և մէկ էլ կրկնել տուեց խօսքը: Այժմ մանուկն աւելի պարզ էր խօսում. նա ասում էր, որ կամենում է տեսնել այն պարոնին, որը Սարանդ փողոցում ձին պահելու համար փող էր բաշխել նորան:

Այս միջոցին պատշգամբի մօտով անցնող սպասաւորը լսելով այս խօսքերը, մօտեցաւ նորան և գոռալով ասաց.

— «Ա՛յ, դու, աւազակ. որովհետեւ պարոնը քեզ մի անգամ փող է բաշխել, դու եկել ես որ դարձեալ խնդրես: Աղքատները միշտ այնպէս աչքածակ են լինում»:

— «Ես փող խնդրելու չեմ եկել, վշտացած պատասխանեց Դիկը. ես եկայ որ նորան փող վերադարձնեմ»:

— «Մի՞թէ պարոնը քեզ հրամայեց, որ տուն գաս, հարցրեց սպասաւորը»:

— «Ո՛չ», պատասխանեց մանուկը:

— «Ուրեմն մի ուրիշը քեզ ուղարկեց»:

— «Ո՛չ», կրկնեց Դիկը:

— «Եւ դու դեռ ասում ես, որ եկել ես փող վերադարձնելու և ո՛չ թէ խնդրելու, գոռաց սպասաւորը: Դէ՛հ, անպիտան տղայ, ես քեզ խորհուրդ եմ տալիս, որ քանի բուրդը չեմ գզել, հեռանաս այստեղից. թէ



չէ տեսնում ես, ահա այնտեղ կանգնած է ստիկանը, ես նորան խկոյն կը յայտնեմ, թէ դու ինչու համար ես եկել»:

Սպասաւորը բարկացած դուռը հրեց, իսկ աղախինը մտաւ խոհանոց և պատմեց միւս ծառաներին, որ մէկ ինչ որ պատուտուած շորերով երեխայ եկել էր, իբրև թէ պարոնին փող տալու:

— «Ի՞նչ ես ասում, սիրելիս. գողերը միշտ այդպէս են անում, ասաց պառաւ աղախինը. նոքա ամենից առաջ սովորեցնում են փոքրիկ մանուկներին մտնել հարուստ տներ, լաւ տնտղել գոցա գրները, պատուհանները, կողպէքները, որ յետոյ գան և պատմեն իրանց: Իսկ երբ գողերն ամեն բան լաւ իմացան, այնուհետև իրանք գիտեն թէ ինչ գործիքներով կը գան և տունը կը կտրեն: Ո՞վ գիտէ, փոքրիկ տղան այժմ ամեն բան արդէն լաւ տեսաւ, որովհետև իմ լաւ միտս է, որ դա մի ժամ առաջ կանգնած էր մեր դրանը և ուշադրութեամբ իւր չորս կողմն էր նայում: Տէր Աստուած. ո՞վ գիտէ, այս գիշեր գողերը գան և մեզ բոլորիս էլ սպանեն»:

— «Ո՞հ, ես սարսափում եմ, աղազակեց Լուիզան, որ առանձին սենեակում մենակ էր քնում. մի թէ ճշմարիտ մեր տուն գողեր կը գան: Եթէ այդպէս է, ինձ որ միլիօն էլ տան, ես այժմ գիշեր իմ սենեակումս չեմ քնիլ»:

— «Ա՛հ հետո երկաթի ունեւիին և մի վախենալ, պատասխանեց պառաւը. իսկ եթէ գողը ինձ պատահի, վայ նորան. ես նորա գլուխը ջարդ ու փշուր կանեմ»:

— «Ուրեմն եթէ այդպէս քաջասիրտ ես, սիրելիս, եկ այս գիշեր տեղերս փոխենք», աղերսում էր գունատուած Լուիզան: Խեղճը չը գիտէր, որ պարծենկոտ պառաւը միայն խօսքով էր մեծ մեծ բրդում. և երբ Լուիզան խնդրեց, որ տեղերը փոխեն, պառաւը չը համաձայնեցաւ, պատճառ բերելով, որ ինքը ուրիշ տեղում չի կարող քնել:

Մինչդեռ այս խօսակցութեան անմեղ պատճառը կամաց կամաց հեռանում էր պարոնի անից, լանկարծ մի ձիու ոտնաձայն լսեց և յետ նայելով, տեսաւ իր ուղած պարոնին: Դիկը ճանաչեց նորան և շատ ուրախացաւ, երբ ձիաւորը № 5-դ տան առաջ կանգնեց: Պարոնը իջաւ ձիուց և հէնց ուղում էր տուն մտնել, մինչև նորա աչքովն ընկաւ Դիկը: մանուկը ողորունում էր պարոնին և ամեն կերպ աշխատում էր նորա ուշքը իւր վրայ դարձնել:

— «Օ՛հ, բարև, սիրելիս, բարև, ասաց պարոնը. կարծեմ դու հէնց այն տղան ես, որ իմ ձիս պահեց Ստրանդ փողոցում:

— «Այո՛, պարոն, ես եկայ վերադարձնելու ոսկի դրամը, որ արտամտք տուել էիք ինձ պղնձէ դրամի տեղ: Այս ատելով մանուկը հանեց զրպանից թղթէ փաթեթը և պարոնին տուեց:

— «Մնկա՞րելի բան է, որ ես սե փողի հետ ոսկի դրամ տուած լինիմ քեզ, ասաց պարոնը Ջօնը և բացեց փաթեթը: Փողերը տեսնելով, պարոնը ժպտաց, ոտից մինչև գլուխ մի լաւ նայեց Դիկին և ասաց:

— «Եւ դու էլ բերի՛ր փողը, որովհետև կարծում



էիբ, թէ սխալմամբ ցանկացածիցս աւելի էի տուել քեզ: Բայց դու քնչպէս իմացար, թէ ես այստեղ եմ բնակվում»:

— «Ես լսեցի, երբ դուք խանութի գործակատարին պատուիրեցիք, որ ձեզ ուղարկելու բանը Գրովեներ փողոցը № 5-դ տանը բերի. կարծելով թէ դուք անպատճառ այդ փողոցումն էք բնակվում, ուղղակի եկայ այս տեղ»:

— «Դու բարի և ազնիւ երեխայ ես, ասաց պարոն Զօնը. թէպէտ փոքր ինչ սխալուեցար, որ նոր կտրած փայլուն կոպէկը իսկական ոսկի դրամի տեղ ընդունեցիր, բայց վնաս չունի: Աստ խնդրեմ, դու երբեւից տեսէլ ես իսկական ոսկի դրամ»:

— «Մի երկու անգամ, պատասխանեց Դիկը. նոքա ճիշտ այդպէս էին, ինչպէս այդ կոպէկը»:

— «Զարմանալի չէ, բարեկամ, որ սխալուել ես. այդպիսի ժամանակ շատերը կարող են սխալուել: Արի, գնանք մեր տուն և պատմիր ինձ, թէ ո՞վ սովորեցրեց քեզ այդպէս ազնիւ լինել»:

Պարոն Զօնը տարաւ երեխային մի փոքրիկ սենեակ, և սկսեց նորան հարց ու փորձ անել: Պարոնն արդէն յայտնի էր իւր բարեգործութիւններով. Դիկի արարմունքը աւելի ևս շարժեց նորա սիրտը: Նա մեծ ուշադրութեամբ լսում էր, երբ Դիկը պատմում էր ծերունի Թոմասի բարի գործերը: Պարոն Զօնն ասաց Դիկին, որ թող իւր կողմից խնդրի ծերունուն առաւօտեան 10 ժամին իւր մօտ գալու: Եւ երբ Դիկը «մնաս բարեն» էր ասում, պարոն Զօնը ընծայեց երեխային յետուն կոպէկ

և ասաց, որ այդպիսի ազնիւ երեխային երբէք չի մոռանալ: Մանուկը լաւ չէր հասկանում, թէ քնչ էին նշանակում այս խօսքերը, բայց զգում էր, որ լաւ բան պէտք է լինէին: Նա այնպէս ուրախ սրտով էր հեռանում պարոնի տնից, որ կարծես թէ աշխարհումս իրանից բաղդաւոր մարդ չը կար: Նա այնքան բան ունէր պատմելու ծերունի Թոմասին, որ չէր իմանում, թէ ո՞րտեղից սկսի: Ծերունին շատ ուրախացաւ, երբ իմացաւ որ լաւ սովորութիւններն այնպէս արմատացել էին Դիկի սրտում, որ նա արդէն չէր կարող գայթակղուիլ և ուրիշի ունեցածը իրան սեփականել:

Միւս առաւօտ շատ վաղ զարթեցաւ Թոմասը, մաքրեց իւր կօշիկները, տօն օրուայ շորերն ու գլխարկը և գնաց Գրովեներ փողոցը: Ծերունին վերջին ժամանակները շատ հազիւ էր ման գալիս հարուստ տներում, բայց երիտասարդ հասակում զանազան գործերով միշտ հարուստների շքեղ պալատներումն էր լինում:

Պարոն Զօնը սիրով և յարգանքով ընդունեց պատուելի ծերունուն, մանաւանդ որ մանուկն արդէն բաւականին լաւ բաներ էր պատմել նորա մասին: Թոմասը մի առ մի պատմեց պարոն Զօնին Դիկի ծնողների թշուառ կացութիւնը, թէ ինչպէս խեղճ անտէր մանուկը վատ օրինակ էր առնում Բօանգ-Պօրտի պէս ապականուած թաղում: Ապա պատմեց, թէ ինչպէս մանուկը սաստիկ սիրելով ծաղիկները, միշտ-կօվէնա շարդէնի վաճառանոցումն էր ընկած, ուր ինքը պատահամբ ծանօթացել էր նորա հետ:

— «Ես այժմ հասկանում եմ, ասաց պարոն Զօնը,



որ Դիկը միայն ձեզ է պարտական իւր ազնուութեամբ, որ ստիպեց նորան վերադարձնելու ինչ կարծեցեալ ոսկի դրամը»:

— «Ես ինչ կարող էի անել, եթէ Աստուած չը կամենար, ասաց Համեստ ծերունին: Աստուած է տուել նորան քնքոյշ և բարի սիրտ և ազնիւ հոգի: Բայց այժմս, քանի հոգիս բերանուծս է, միայն մի բան եմ ցանկանում, այն է՝ Հանել թշուառ երեխային այն աւազակների որջից, ուր մարդիկ անազնիւ են, ուր տիրապետում է զեղխութիւնը և արբեցողութիւնը, ուր ծնողները ամենևին հոգս չեն քաշում իւրեանց զաւակների կրթութեան համար»:

— «Մանուկն այլ ևս այնտեղ չի մնալ, ազնիւ բարեկամ, սիրտ տալով ասում էր պարոն Զօնը. նորա մասին այժմէն իսկ կը հոգամ: Մենք դարձեալ կը խօսենք, և ինչպէս էլ որ չը կարգադրենք, կարծեմ որ մանկան ծնողները արգելք չեն լինիլ մեր կամքին: Դուք թնչ էք կարծում, ծերունի»:

— «Արգելք չեն լինիլ, պարոն, չէ. նոքա ամենևին ուշք չեն դարձնում մանկան վրայ և մինչև անգամ ուրախ էլ կը լինէին, որ նորանից կազատուին»:

— «Բայց արդեօք կը ցանկանայ մանուկը պարտիզպանութեամբ պարապել, ասաց պարոն Զօնը. կարծեմ դուք ասում էիք, որ նա շատ է սիրում ծաղիկներ»:

— «Այո, պարոն, նորա խելքը գնում է ծաղիկներից, ասաց ծերունին: Երեկ, երբ դուք նորան փող էիք ընծայել, նա ամենից առաջ վազել էր և գնել ինչ ըն-

ծայելու համար մի ծաղկամանով վարդ: Խեղճն ուզում էր ինչ այն բանով ուրախացնել, ինչ որ ամենից շատ ինքն է սիրում: Նա լաւ պարտիզպան կը լինի»:

— «Մինչև այժմս, յարգելի ծերունի, դուք էք եղել մանկան միակ բարերարը. թող Աստուած ձեզ փութարէնը հատուցանէ: Այժմ ես եմ յանձն առնում նորան խնամելը և կ'աշխատեմ յաջողութեամբ աւարտել ձեր այգպէս լաւ սկսած գործը: Յոյս ունիմ, որ դուք էլ կը համաձայնիք մտադրութեանս հետ: Եկող երկուշաբթի խնդրեմ շնորհ բերէք ինչ մօտ Դիկի հետ միասին: Մինչև այդ ժամանակ յուսամ ամեն բան, ինչպէս հարկն է, կարգադրելու»:

Պարոն Զօնը իւր խօսքի տէրն էր:— Երկուշաբթի օրը, երբ նշանակեալ ժամին Թոմասն ու Դիկը անցնում էին Գրօսվեներ փողոցով, ծերունին հարցրեց մանկանը.

— «Դու կը ցանկայիր պարտիզպանութեամբ պարապել»:

Այս խօսքերը լսելով, այնքան ուրախացաւ Դիկը, որ լեզուով չէր կարողանում իւր ուրախութիւնն ու համաձայնութիւնն արտայայտել:

— «Իմ գիւղում ես մի հմուտ պարտիզպան ունիմ, ասաց պարոն Զօնը Դիկին. ես նորան արդէն զրել եմ քո մասին: Թէ և նա մի քանի փոքրիկ տղաներ ունի, բայց կ'ուզենար դարձեալ մէկին էլ ընդունելու: Ես ուզում եմ քեզ նորա մօտ ուղարկել, համաձայն ես: Դու նորա տանը կ'ապրես, նորա կիներ կը խնամէ քեզ, և եթէ քեզ լաւ կը պահես, այնտեղ քեզ համար շատ



լաւ կը լինի, մանաւանդ որ այնտեղ դու ամեն կողմից շրջապատուած կը լինիս քո սիրելի ծաղիկներով»։ Քրպտալով անաց պարոն Զօնը, քո այ ամ նուրիս ձ մգմի -մ ց Այս ամենից յետոյ պարոն Զօնը Թոմասին փող տուեց Դիկի համար երկու ձեռք նոր շոր և ամեն հարկաւոր բաներն առնելու, և խնդրեց ծերունուն, որ մանկան ծնողների հետ էլ մի կերպ վերջացնի գործը։

Երկու շաբաթից յետոյ պարոնի Զօնի ընտանիքը մեկնելու էր Լօնդոնից, և Դիկը ուրիշ ծառաների հետ միասին տանտէրերից առաջ պիտի ուղևորուէր Դէնգամ Կօրտ, - պարոնի կալուածքը։

Դիկը խօսք չէր գտնում իւր խորին շնորհակալութիւնն արտայայտելու։ Նորա սիրտը լցուած էր ուրախութեամբ, և մանաւանդ որ ինքն էլ չէր իմանում, թէ ինչպէս կարճ ժամանակում բոլորովին փոխուեցաւ դէպի լաւը։ Ծերունի Թոմասը իւր սիրելի սանիկից պակաս չէր ուրախացել այդպիսի բաղդաւորութեան համար, և Պարոն Զօնին իւր խորին յարգանքն ալ շնորհակալութիւնն էր մատուցանում։

Երբ նոքա գուրպական պարոն Զօնի տնից, ծերունին ասաց երեխային.

— «Դիկ, գու լիովին արդարացրիր գեղազուլութեան օրինակի այն խօսքերը, որը երեկ արտագրել էիր քո տետրում։ «Honesty is the best policy» - («ազնուութիւնը՝ - ամենալաւ քաղաքսովարութիւնն է»)»

նայամ զձ իոգչա չիդո միտոյոյոց մէքոս եկա իոյ  
 ույայ մէքոց միցմնդոսաա **Գ.** զոյոց ման յաջի մարման  
 յընկելոնտաա շէքոն զմաք

**Խ**նդրում եմ իմ ընթերցողներին Դիկի հետ միասին տեղափոխուիլ նորա նոր բնակարանը — Դէնգամ-Կօրտ։ Նորա ծնողների հետ պայմանը կապել էին, նոր շորերը գնել։ Մանուկը նոր շորերը հագնելով, բոլորովին կերպարանափոխուեցաւ։ Նա հագած ունէր սև մահուդի վերնազգեստ, սպիտակ մաքուր շապիկ և սև փող — պատ։ Նանապարհ ընկնելու օրը երբ մանուկն առաջին անգամ այդպէս զուգուած զարդարուած դուրս եկաւ իրանց տնակից, Բօանգ-Կօրտի երեխաները շրջապատեցին նորան, կարծես թէ հրաշք էին տեսնում. նոցանից մի քանիսը, ինչպէս օրինակ Լարկինդը, ծաղրում էին նորան ասելով. «Օ՛, տեսէք, տեսէք, Դիկը մեծ մարդ է դառել. այժմ էլ ո՞վ կարող է նորա հետ խօսել, հեռու կացէք, հեռու, չը դիպչէք նորա շորերին...»։ Իեղծ Դիկը հազիւ կարողացաւ ազատուել նոցա ձեռքից և ուրախ ուրախ եկաւ Թոմասի մօտ, որի հետ միասին Գրօսվեններ փողոցը պիտի գնար։

Ծառաների համար պատրաստուած կառքը արդէն դրան մօտ էր. այդ կառքով պիտի գնային երկաթուղու կայարանը։ Իրեղէնները զարթում էին աւագ սպասաւորի ներկայութեամբ, որը նոր եկողներին խնդրում էր առ ժամանակ խոհանոցը մտնել, ուր մնացած ծառաներն էլ հաւաքուած, ուրախ ուրախ պատրաստուած էին ճանապարհ ընկնելու։ Այդ տեղ էր և աղախին Լուիզան, որը Դիկին առաջ գողի տեղ էր ընդունել,



իսկ այժմ արդէն բոլորովին ուրիշ աչքով էր նայում մանկան վրայ: Տան բոլոր սպասաւորներին արդէն յայտնի էր «*փալաւն էր պատմութիւնը*»:

Վերջապէս ամեն ինչ պատրաստ էր և Դիկին հրամայեցին կառք նստել: Խեղճ երեխայի համար շատ ծանր էր բաժանուիլ իւր բարեսիրտ և ազնիւ բարեկամից, որը նորա վրայ հօրեցն աւելի խնամք ունէր և որին անկեղծ սրտով սիրում էր: Իսկ բարեսիրտ ծերունին աւելի ևս վշտանում էր, որ բաժանուելու էր իւր սիրասուն սանիկից:

— «Թող Տէր Աստուածը օրհնէ քեզ, որդեակ, յուզուած և դողդոջուն ձայնով ասաց ծերունին. երբէք չը մոռանար քո երկնաւոր Հօրը և այս իմ վերջին խօսքը լաւ միտդ պահիր»:

Կառքը շուտով հասաւ երկաթուղու կայարանը: Նոքա նստան շոգեկառք: Հրամանը տրուեցաւ, մեքենան փրփրաց, հառաչեց և մի րոպէում Լօնդոնը անհետացաւ նոցա աչքից: Նորա փոխանակ ճանապարհորդներին զմայլեցնում էին Անգլիայի կանաչագարդ դաշտերն ու արտորայքը...»: Ո՛հ, Տէր Աստուած, ինչ հրաշալի է՝ հազիւ բացականչեց Դիկը: Եւ ինչո՞ւ այս ծառաները խօսում են մէկզմէկու հետ և չեն նայում այս սքանչելի տեսարաններին, ասում էր ինքն իրան մանուկը: Կարծես թէ միայն Լուիզան էր համակրում Լօնդոնի թափառաշրջիկ երեխայի խնդութեանը: Լուիզան շատ բարի աղջիկ էր, և պատուհանի մօտ տեղ էր տուել Դիկին, որ նա աւելի լաւ կարողանար տեսնել զիւղերն ու ար-

տերը: Երեկոյեան նոքա հասան մի իջևան: Այդտեղ զոցա սորսո՞ւմ էր ճանապարհի մեծ կառքը: Նոքա կառք նստան և ուղևորուեցան Դէնգամ: Դիկը նստեց կառքապանի մօտ և այս տեղից կարողանում էր ամեն բան տեսնել: Մի վերստաչափ անցնելով, նա տեսաւ մի մեծ տուն, որ շինած էր մի հոյակապ պարտիզի մէջ: Այդ տունը պարոն Ջօնի սպարանքն էր: Կառքը կանգնեց պարտիզպանի փոքրիկ, գեղեցիկ տնակի առաջ. Դիկին հրամայեցին վայր իջնել կառքից, որովհետև նա քնակուելու էր պարտիզպանի տանը:

Գոցա առաջն եկաւ պարտիզպան Նէյլօրի մանկահաս և գեղեցիկ կինը, սիրով և յարգանքով ողջունեց ճանապարհորդներին և երբ կառքը հեռացաւ, նա բռնեց Դիկի ձեռքը և ժպտալով ասաց. «Կարելի է յոգնած և քաղցած ես սիրելիս, արի՛ զնանք ներս մի փոքր հանգստացիր»: Նոքա մտան տուն, ուր պատրաստ էր թէյի սեղանը: Պարտիզպանի փոքր տղաները շտապով ներս վազեցին սենեակը Լօնդոնից եկած երեխային տեսնելու: Ապա ներս մտաւ ինքը պարտիզպան Նէյլօրը, որ մի բարձրահասակ, գեղեցիկ և ուշիմ տղամարդ էր: Նա հարց ու փորձ արաւ Դիկին, ասաց, որ բաւականին լաւ բաներ է պատմել նորա մասին պարոն Ջօնը և թէ ինքը յայտ ունի, որ ինչպէս մինչև այսօր, այսուհետեւ էլ նոյնպէս ազնիւ և աշխատասեր երեխայ կը լինի:

Դիկը շատ քաղցած էր և մեծ ախորժակով խմեց հացով թէյը: Թէյն աւարտելուց յետոյ պարտիզպանուհին տարաւ Դիկին նորա համար պատրաստած սենեա-



կը: Սենեակը թէ և շատ փոքր էր, բայց շատ յարմար- նորա պատուհանները ծաղկազարդ պարտիզին էին նա- յուամ: Երկար ճանապարհորդութիւնից սաստիկ յոգնել էր Դիկը: Նա պառկեց և ողջ գիշեր մեռածի պէս էր քնած:

**Ո՛վ** կարող է լինի թերցող, նկարագրել Լօնդոնի փողոցներում մեծացած տղայի ուրախութիւնը, երբ առաւօտը զարթնելիս նա տեսաւ, որ այս երազ չէր, այլ ճշմարիտ որ ինքը սիրուն ամառանոցումն էր գտնվում: Նէլլօրի կինը շատ էր գովում Դի- կին, իսկ մարդն յասում էր, որ մանուկը դեռ շատ փոքր է: «Հարկ չը կար այնքան հեռու տեղից նորան բերել այստեղ, բայց ինչ արած, պարոն Զօնն այդպէս կամեցաւ»: Սակայն պարտիզպանը շատ զարմացաւ, երբ տեսաւ որ մանուկը բաւականին վարժ գրում—կարդում էր, և զիտէր համարեա պարտիզի և ծաղկոցների բո- լոր ծաղիկների անունները, այն ինչ նորա տարեկիցնե- ները մինչև անգամ չեն կարողանում արևածաղիկը ա- ւելուկից զանազանել: Պարտիզպանն յետոյ միայն իմա- ցաւ, որ Դիկը համարեա իւր բոլոր ժամանակը Կօլէնտ Հարդէնի հրապարակումն էր անցկացրել, որտեղ և տո- վորել էր զանազան բանջարների ու ծաղիկների անուն- ները: Պարոն Զօնի կալուածքում շատ բանւորներ կային.

սոքա բոլորն էլ հեռաքրքրութեամբ նայում էին Դի- կին, մանաւանդ որ նա Լօնդոնիցն էր ուզարկուած և նոյն իսկ պարտիզպանի տանն էր բնակվում: Դիկը և Դէնգամը գեղեցիկ տեղ էր, բայց մանուկը երբեմն շատ տխրում էր, որ մի արտացաւ բարեկամ չունէր: Պարոն Զօնը իւր ընտանիքով գնացել էր ծո- վային ջրերը լողանալու, և աշունքից վաղ չէր վերա- դառնալու: Դիկն անհամբեր սրտով սպասում էր տես- նելու թարեսիրտ պարոնին, որին շատ կարօտել էր և որին հոգևով չափ երախտապարտ էր: Պարտիզում Դի- կը շատ բան չունէր անելու: Նա պէտք է ծառուղի- ներում քսած խոտերը պոկոտէր, պարոնի տուն կանա- չի և միրգ տանէր, և երբեմն էլ (որ շատ սիրում էր) վարգենի կամ որ և է ուրիշ ծաղիկ մէկ ծաղկամանից միւսը տեղափոխել: Նորա ամենասիրելի զբաղմունքներից մէկն էր Նէլլօրի հետ միասին ծաղկանոց մտնել և զմա- լուիլ հիանալի ծաղիկներով: Պարտիզպանն արդէն հեռ գհետէ համոզվում էր, որ մանուկը շատ ընդունակ է և թէ պարոն Զօնը շատ լաւ ընտրութիւն է արել: — «Դիկը շատ ընդունակ տղայ է», ասաց մէկ անգամ Նէլլօրը իւր կնոջը. սչ մի բան նորա աչքից չի թռչում, և հէնց մի որ և է բոյսի անուն տամ, դու կարծում ես նա կը մոռանայ. — երբէք: Ի՞նչ ես ասում, Աստուծոյ ողորմութիւն է այդպիսի սուր լիշո- դութիւն ունենալը»: — «Նա շատ պատուական տղայ է, նկատեց կինը. և այնպէս խոնարհ, որ ասել չի լինիլ: Ո՛ւր կ'ուզես, ուղարկիր, կերթայ, և մեր փոքրիկները» — Նէզն ու



Տօմմին անպէս սիրում են նորան, որ էլ չեն ուզում մօտից հեռանալ:

Նէզնու Տոմմին Նէլլօրի որդիքն էին. սոքա սեռակ աշիկներով շատ ուրախ և աշխոյժ մանուկներ էին, Ռիկից մի քանի տարով փոքր: Յերեկուայ աշխատանքներից յետոյ Ռիկը կարկատում էր նոցա փռռանը, նոցա համար սայլակներ էր շինում և ամեն կերպ աշխատում էր նոցա բաւականութիւն տալ: Երբ օրերն սկսեցին կարճանալ և ծառերի տերեւները գեղնել, սպասաւորներին յայտնեցին, որ պարոն Ջօնն ընտանիքով վերադառնում է իւր կալուածքը: Նա աւելի վաղ կը վերադառնար, եթէ ճանապարհին աղջիկներից մէկը չէր հիւանդացել: Բայց այժմ արդէն վերադարձի օրը ճիշտ որոշուած էր, և ինչպէս տեսնել, այնպէս էլ պարտիզում մեծ պատրաստութիւններ էին լինում: Ռիկը եռանդով օգնում էր ամենին. մի խոտ չը պէտք է բսած լինէր ճեմելիքներում, մի աւելորդ տերեւ կամ ճիւղ ածուկներում: Մէկ շարք ծաղիկներ պէտք է տան սրահում դարսուէին, միւսները հիւրանոցում: Հանդերձարանի մօտի ապակեայ սենեակը շատ ընտիր և հագուազիւտ ծաղիկներով պէտք էր զարդարել: Ռիկն այնքան ծաղիկներ էր կրել պարտիզից ու ծաղիկանոցից, որ խեղճի կուները կտրտվում էին, բայց նա ամենեւին չէր դանգատվում: Նա կարծես թէ աչքով ուտում էր հիւանալի հագուազիւտ ծաղիկները, որոնք հմուտ ձեռքով և ընտիր ճաշակով դասաւորուած՝ պարոնի պարտաւորը անմահական դրախտ էին դարձրել: Երբ ամեն բան պատրաստ էր, Նէլլօրը մի քանի

քայլ լեռ գնաց, որ տեսնէր, թէ արդեօք ամեն ինչ իւր ցանկացածի պէս կարգին է թէ ոչ. յանկարծ նա աչքը ձգեց Ռիկի վրայ և հիացաւ, երբ տեսաւ որ մանկան դէմքը փայլում էր ուրախութեամբ այս տեսարանը դիտելիս:

— «Մէհ, ասան, Ռիկ, հաւանում ես», հարցրեց պարտիզպանը:

— «Ո՛հ, ի՞նչ հիւանալի է, ես երբէք չէի ձանձրանալ սորա վրայ նայելուց», խնդալով պատասխանեց ապագայ պարտիզպանը:

— «Այս մանուկը ծնուած է պարտիզպան լինելու, մտածում էր Նէլլօրը: Նա անպատճառ պէտք է լատիներէն սովորի: Նս այս բանը կը յայտնեմ պարոն Ջօնին», ասաց նա և գնաց տուն: Պէտք է ասել, որ Նէլլօրը շատ ազնիւ մարդ էր և ամենեւին չէր նախանձում Ռիկին, չը նայելով որ նա ինքն էլ ուզում էր իւր որդոցը պարտիզպանութեան համար պատրաստել: Ինքը Նէլլօրը շատ հմուտ և լաւ պարտիզպան էր. նա շուտ իմացաւ, որ Ռիկը շատ ընդունակ էր և առանձին սէր ունէր պարտիզպանութեան վրայ. և մտքումը դրեց անպատճառ օգնելու նորան:

Վերջապէս պարոն Ջօնը իւր ընտանիքով վերադարձաւ Իէնգամ-Վօրտ: Ռիկը դռան առաջ կանգնած սպասում էր հիւրերին, որ կառքի դրները բանայ, յուսալով որ պարոն Ջօնը մի ուրախալի ժպիտ կը պարզւէր իրան:

Նէլլօրը Ռիկի մօտին ամենալաւ կարծիքը յայտնեց: Պարոն Ջօնը լիովին համաձայն էր Նէլլօրի հետ, որ



անպատճառ հարկաւոր էր երեխային ուսում տալ: Դէնգամում կար մի դպրոց, որի ուսուցիչը մի շատ լաւ կրթուած երիտասարդ էր: Պարոնը կարգադրեց, որ Դիկը առաւօտները դպրոց գնար, իսկ երեկոները բանէր պարտիզում: Ուսուցիչը համաձայնուեցաւ շաբաթը երեք անգամ լատիներէն լեզուի դասեր տալ նորան:

«Պարոն Զօնը չի սիրում կիսատ գործ անել», ասում էր Նէյլօրի կինը. «գուց կը տեսնեն, որ նա բուլորովին կ'ապահովի այս մանկան ապագան»:

«Պարոն Զօնը նորան ճանապարհ ցոյց կը տալ, և Դիկը այնպիսի մանուկներէն է, որոնք գիտեն դէպքից օգուտ քաղել», ասաց Նէյլօրը:

Ժամանակն անցնում էր, դիկը լաւ առաջ էր գնում և ուսուցիչը շատ գոհ էր նորանից: Շատերը նորան սիրում էին իւր ուրախ, պարզ բնութեան և խոնարհութեան համար: Պարոն Զօնին շատ էր գրաւում մանկան յառաջադիմութիւնը, իսկ նորա կինն ու աղջիկները շատ անգամ զրոյց էին անում մանկան հետ, որովհետեւ իմացել էին նորա Դէնգամ գալու պատմութիւնը: Բայց... սէր էլ որ չը գնանք, ինչպէս էլ որ չ'ապրենք, զարձեալ մեզնից ամեն մէկիս կեանքի մէջ սպասում է որ և է դժբաղդութիւն: Նոյնը պատահեց Դիկին, — այնպիսի երջանիկ ապաստարանումն անգամ, ինչպիսին էր Դէնգամ-Վօրտը: Այս տան մէջ Դիկը թշնամի ունեցաւ:

Պարտիզում ծառայում էր մի մանուկ, Զօրջ Բէնտամ անունով, որը Դիկին առաջին տեսնելուց արդէն

սկսեց ատել: Զօրջը տեսնում էր, որ Դիկը պարոն Զօնի և Նէյլօրի սիրելին է, և այս միայն բաւական էր լիմար և ինքնահաւան տղային գրգռելու: Նորա ասելով, իրան շատ հաճելի էր Դիկին «վասէլ» և իրաւ որ Զօրջը ոչ մէկ առիթ ձեռքից չէր թողնում որ մի վատ բան չասէր կամ մի որ և է անախորժ բան չանէր: Զարմանալի է, թէ այդպիսի անպիտան մանուկը եթէ ուզենայ, որքան վատութիւն կարող է անել: Օրինակ՝ նա թագցնում էր պարտիզի հարկաւոր գործիքները, և երբ Դիկը գնէր տեղը պարելով ժամանակ էր կորցնում և Նէյլօրն էլ բարկանում էր նորա վրայ, Զօրջն արդէն երջանիկ էր համարում իրան:

Մի անգամ աշունքին, երբ Դիկը շատ մաքուր աւելեց գլխաւոր ճեմելիքը և գնաց աղբի ամանը բերելու, յետ դառնալով տեսաւ, որ բոլոր աղբը ցրուած է: Խեղճը ստիպուած պէտք է նորից աւելէր, այն ինչ նորան հրամայուած էր, որ 11 ժամին ամեն ինչ պատրաստ լինէր, որովհետեւ պարոն Զօնի կինը սովորութիւն ունէր հէնց այդ ժամին այս տերեւախիտ ճեմելիքով զբօսնելու: Ո՛րքան էլ խեղճ մանուկը չարչարուեցաւ, բայց դարձեալ չը կարողացաւ գործը ժամանակին աւարտել, և ճեմելիքի վերջումը գեռ ցրուած էին տերեւները, երբ տիկինը իւր մէկ դստեր հետ արդէն երևեցաւ: Տիկինը նկատեց այդ բանը և հրամայեց Դիկին, որ միւս օրուայ համար ճեմելիքը շատ մաքուր աւելած լինի, և նոյնը կրկնեց Նէյլօրի առաջ: Պարտիզպանը սաստիկ յանդիմանեց Դիկին, և ի հարկ է, չը հաւատաց, երբ խեղճ մանուկը հեկեկալով հաւա-



տացնում էր, որ ինքը մաքուր աւելել է և հաւաքել, իսկ բանւորներից մէկը ցրուել է: Եւ ցտան այն էր, որ Դիկը չէր կարող ոչոքի անունը տալ, թէ և սրտով իմանում էր, թէ ով արած կը լինի այս չար հանաքը: Մի ուրիշ անգամ էլ Դիկը իւր քարետախ ալի վրայ մեծ չարչարանքով մի դժուար խնդիր էր լուծել: Նա ուսողմնարան էր գնում, բայց որովհետև գիրքը մոռացել էր, քարետախակը վայր դրեց դռան մօտ և մտաւ սենեակը գիրքը որոնելու: Շատ պտրտելուց յետոյ գտաւ գիրքը, վերցրեց քարետախակը և գնաց ուսումնարան: Բայց ինչպէս զարմացաւ խեղճ երեխան, երբ տեսաւ խնդրի վճիռը բոլորովին ջնջուած: Նա շատ վշտացաւ, բայց ինչ կարող էր անել, եթէ ոչ պատմել ուսուցչին բոլորը և խնդրել, որ իրան թույլ տայ վճուած խնդիրը միւս օրը ներկայացնելու: Ուսուցիչը շատ անգամ էր լսել այդպիսի արգարացնող պատճառներ, և սատիկ յանդիմանեց Դիկին, որ շատ անկարգ է պահում իրան: Դիկը տեսնելով, որ ուսուցիչը չէ հաւատում, քիչ մնաց, որ լաց լինէր: Մանուկը չէր կարող հաստատել, որ մեղաւորը Ջօրջն է: Նա միայն գիտէր, որ Ջօրջը միշտ այդ ժամանակն էր գնում նախաճաշելու և այն էլ լաւ իմանում էր, որ նա միշտ պատրաստ էր իրան վնասելու:

Ծերունի Թոմասը չէր մոռանում իւր փոքրիկ բարեկամին, Դիկն էլ հոգևով չափ սիրում էր իւր բարերար ծերունուն: Ժամանակ առ ժամանակ նոքա միմեանց նամակ էին գրում և այս նամակադրութիւնը մանկան յիշողութեան մէջ վառ էր պահում Թոմասի

բարի խրատները: Բարեսիրտ պարոն Ջօնը երբ Լօնդոն հասաւ, հրաւիրեց իւր մօտ ծերունուն և յայանեց նորան, որ գլխաւոր պարտիզպանը մեծ յոյս ունի Դիկից, որովհետև մանուկը շատ ընդունակ է:

— «Կը ցանկայի տեսնել նորան երևելի պարտիզպան դարձած, ասաց ծերունին, բայց աւելի ևս կը ցանկայի իմանալ, որ նա մինչև իւր մահը բարի և ազնիւ կը լինի»:

— «Այդպէս էլ կը լինի, ասաց պարոն Ջօնը, բայց ինչպէս են նորա ծնողները»:

— «Առաջուանից աւելի վատ, պատասխանեց Թոմասը. մայրը շատ հարբելուց այնպէս ոյժից ընկել է, որ այլ ևս յոյս չը կայ ապրելու. իսկ հայրը համարեա միշտ հարբած է: Անցեալ օրը գնացել էի նոցա տուն, որ իրենց զաւակի մասին մի տեղեկութիւն տամ, բայց նոքա շատ անտարբեր էին դէպի իրենց որդու վիճակը և հազիւ մի քանի բան հարցրին նորա մասին»:

— «Ուրեմն աւելորդ է Դիկին Լօնդոն բերել տալ: Եթէ այդպէս է, աւելի լաւ է, որ մանուկը ծնողներից հեռու մնայ: Դուք թնջ էք կարծում, յարգելի ծերունի»:

— «Ես կարծում եմ, որ Բօանդ-Պօրտը Դիկի տեղը չէ, և որքան նա շուտ մոռանայ այդ թաղը, այնքան լաւ: Ա՛խ, ինչպէս կուզենայի տեսնել երբեք Դիկին, բայց այդ փոքր ինչ դժուար կը լինի: Ես արդէն մօտ եօթմանասուն տարեկան եմ, թէ և՛ դեռ առողջ և ժիր, բայց մի ոտս արդէն գերեզմանումս է: Թո՛ղ Տէր Աստուածը օրհնէ ձեզ, ազնիւ պարոն, որ այդպէս հոգում էք մանկան մասին»:



մարտի ցցմ ցմօն մարտի արգիսցոյն արգիսցոյն արգիսցոյն արգիսցոյն

... Ե. ցրտման մասին արգիսցոյն արգիսցոյն

Համարեա մի տարի էր անցել, ինչ որ ծերունին ծանօթ էր Բիկի հետ: Գարունը եկաւ և պարոն Զօնը իւր ընտանիքով պատրաստուլում էր գնալու իւր կալուածքը: Բէնգամ-Կորտ: ցի ցի արգիսցոյն

Հրամանը տրուեցաւ և պարոն Զօնի սպասաւորները, ինչպէս սովորութիւն էր, մի քանի օրով առաջ դուրս եկան քաղաքից: Բուցէ ոչ ոք այնքան ուրախ չէր պարոն Զօնի ընտանիքի գալուեն, ինչպէս Բիկը: Նա սիրում էր նայել, թէ ինչպէս տիրուհին և իւր աղջիկները ման էին գալիս ձիով և իրան պատահելիս, ուրախ ժպտալով ողջունում էին, մանաւանդ որ պարոն Զօնը շատ էր գովում Բիկին, որովհետև Նէլլօրը և զպրօցի ուսուցիչը լաւ կարծիք էին յայտնում նորա մասին: ամբ արգիսցոյն ցի ցի արգիսցոյն ցի ցի արգիսցոյն

Այն օրը, երբ սպասաւորները կալուածքը պէտք է գնային, պարտիզպանի կինն ասաց Բիկին, որ նոցա հետ միասին Լօնդօնից գալու է մի հիւր, և նա պէտք է իւր սենեակը հիւրին տայ, իսկ ինքը տեղափոխուի նորա գաւակներին ննջարանը: Փոքրիկ Նէզն ու Տօմմին շատ ուրախացան, երբ լսեցին, որ Բիկը իրենց հետ պէտք է պառկէր և հէքիաթներ պատմէր: Երեկոն վրայ հասաւ և Բիկը անհամբերութեամբ սպասում էր հիւրին, որ իմանայ թէ ով կը լինի: Կառ-

քը կանգնեց դռան առաջ և սպասաւորը գրկած գուրօ բերեց կառքից մի ծերունու: Չը նայելով որ ամառուան խաղաղ և պարզ զիշեր էր, ծերունին շատ տաք էր հագնուած: Պարտիզպանուհին իսկույն առաջ եկաւ հիւրին ընդունելու, բայց հազիւ թէ կարող էր ողջունել նորան, որ Բիկին արդէն փաթաթուել էր հիւրի վզով: — Այդ հիւրը Թոմասն էր:

Պարոն Զօնը գիտամբ առաջուց չէր յայտնել Բիկին, թէ ծերունի Թոմասը միտք ունի Բէնգամ գալու, որպէս զի անսպասելի տեսակցութիւնը աւելի ախորժելի լինէր նորա համար: Ծերունուն բաւականութիւն պատճառելու համար պարոն Զօնը երկու շաբաթով հրաւիրել էր նորան իւր կալուածքը:

Ծերունին Բիկին բոլորովին փոխուած տեսաւ. մանուկը մեծացել էր, լքցուել, գեղեցկացել և այստեղ աւելի առողջ էր, քան թէ Բօանդ-Կօրտում:

— «Խնդրեմ համեցէք, շատ ուրախ ենք», ողջունելով ասաց պարտիզպանուհին, ներս համեցէք. յոյս ունիմ որ մեր տանը ուրախ ժամանակ կանցկացնէք: Իսկ Բիկը, ես հաւատացած եմ, որ ուրախութիւնից ողջ զիշերը չի քնիլ»:

Ահա այսպէս լաւ ընդունեցին ծերունուն, բայց Նէլլօրի կնոջ խօսքը չը կատարուեցաւ: Բիկն այնպէս լաւ էր քնած, որ առաւօտեան պարտիզպանի որդիքը թռան նորա անկողինը և ինչպէս իրանք ասում էին, գանազան հանաքներ անելով, ուղում էին աւելի շուտ գարթեցնել նորան:

Առաւօտը լուսացաւ թէ չէ, Բիկը հպարտ հպարտ



տարաւ իւր հին բարեկամին ցոյց տալու պարտէզն ու ծաղկօցները, ուր ծերունին այնպիսի հազուագիւտ ծաղիկներ ու պտուղներ տեսաւ, որ իւր կեանքում տեսած չէր: Իրկին իրաւունք տուին, որ ամեն բան ցոյց տայ իւր բարեկամին: Ամէն մէկ հիանալի ծաղիկ ցոյց տալիս, նա միշտ ասում էր. «Ինչ որ չեստոյ պէտք է ցոյց տամ, այն աւելի լաւ կը լինի»: Եւ ճշմարիտ որ անկարելի էր նկարագրել ծերունու բերկրութիւնը, երբ պարօն Զօնի կալուածքը տեսաւ: Նա եօթանասուն տարեկան ծերունի էր և իւր կեանքում դեռ այդպիսի հրաշալի կալուածք չէր տեսել:

2.

**Ս**օտ մի ամիս էր անցել, և Թոմասը դեռ Դէնզամուս հիւր էր: Շատ անգամ կարելի էր տեսնել նորան պարտիզում, զարեւոր կաղնի ծառի տակ նստած գիրք կարդալիս: Երբեմն պարօն Զօնը նստած նորա մօտ, ուշադրութեամբ լսում էր փորձառու ծերունու իմաստուն խօսքերը: Թոմասն ասում էր, որ ինքը շուտով Լօնդօն պէտք է գնայ, թէ և պարօն Զօնը խնդրում էր նորան դեռ էլի մնալու:

— «Բաւական է, որքան ձեր հիւրասիրութիւնը վայելեցի, ազնիւ պարօն: Ես փափագս առայ և այժմ

հանգիստ սրտով ճանապարհ կընկնեմ: Թող Աստուած վարձատրէ ձեզ ծերուկիս ցոյց տուած սիրալիր հիւրընկալութեան համար»:

— «Կարելի է դուք աւելի սիրում էք Լօնդօնում ապրել, մանաւանդ որ դուք այնպէս ընտելացել էք ձեր խաղաղ բնակարանին»:

— «Ո՛չ, պարօն. ես գիտեմ որ այնտեղ աւելի սաստիկ պիտի զգամ իմ միայնակութիւնս, երբ լիջեմ ձեր հիւրընկալ տունը, ուր ամենքդ այնպէս սիրում էիք ինձ և իմ սիրելի սանիկիս: Իրտեմ, որ զրկուած պիտի լինիմ այս դարեւոր կաղնիներից, այս հրաշալի ծաղիկներից ու երգող թռչունների դայլայլիկից: Ո՛չ, ազնիւ պարօն, Դէնզամը միակ տեղն է, ուր կը կամենայի զառամեալ ոսկորներս հանգստացնել, բայց Աստուած այլապէս է տնօրինել: Ես պէտք է ապրեմ և մեռնեմ Լօնդօնում, մարդկային ունայն աղմուկի և շփոթի մէջ»:

Պարօն Զօնը մի քանի րոպէ լռելուց չետոյ, ասաց. «Ազնիւ բարեկամ. չը կայ աշխարհիս երեսին մի այնպիսի տեղ, ուր ձեզ մենակ զգայիք: Զեր բարի սիրտը միշտ կը գտնէ մարդիկ, որոնց նուիրած կը լինի ձեր խնամքն ու սէրը: Բայց ասենք թէ Աստուած իւր անսահման իմաստութեամբ այնպէս է տնօրինել, որ դուք տեղափոխուէիք մի ուրիշ նոր բնակարան, ուր ձեզ կը խնամեն հիւանդութեան ժամանակ, ուր ձեր կեանքի մնացած օրերը խաղաղ և հանգիստ կ'անցնէք. դուք արդեօք չէ՞ք կատարիլ նորա սուրբ կամքը և չէ՞ք ընդունիլ այն խաղաղ օթեանը»:

— «Ի հարկ է, ի հարկէ որ կընդունեի. բայց



որովհետև այդ անկարելի է, այդ պատճառաւ էլ ես շնորհակալ եմ Աստուածանից և Լօնդոնում ունեցած փոքրիկ տնակիս համար», հանդարտ պատասխանեց ծերունին»:

— «Ասեցէք, բարեկամ, ասաց պարոն Զօնը: Ես հանեցի Դիկին Բօանգ-Կօրտի ապականեալ շրջանից և իմ տանս ապաստանարան տուի նորան: Այժմ նախախընամութիւնը ինձ կարողութիւն է շնորհում բարեօքել և քաղցրացնել ձեր ծերութեան վերջին տարիները: Ես կամենում եմ ձեզ աւելի յարմար բնակարան տալ, բան թէ ձեր Լօնդոնի բնակարանը: Ահա բանն ինչու՞մն է: Ես մի փոքրիկ գիւղական տնակ ունիմ, ուր բնակեցրել եմ իմ նախկին հաւատարիմ պառաւ աղախնուս և նորա եղբոր աղջկան: Տնակն այնքան ընդարձակ է, որ պառաւը համաձայն է տալ ձեզ ննջարանը և մի փոքրիկ ընդունարան, և խոստանում է այնպէս խնամել ձեզ, որ ոչնչի կարօտութիւն չը զգաք: Ես յանձն կառնեմ ձեզ համար բնակարանը պատրաստել, միայն դուք գնացէք Լօնդոն, հաւաքեցէք ձեր ունեցածը, վերջին «մնաս բարեւ» ասացէք ձեր հին տանը և ապա վերադարձէք մեզ մօտ: Մենք ուրախութեամբ կը սպասենք ձեր գալստեանը, իսկ դուք էլ կարող կը լինիք ամեն օր տեսնել ձեր սիրելի Դիկին»:

Թոմասը լուռ էր. նա մտածում էր պարոն Զօնի առաջարկութեան վրայ և ալեգարդ ծերունին ուրախանում էր, երբ մտածում էր, թէ ինքը պէտք է ապրի իւր սանիկի հետ, որին որդու պէս սիրել էր: Աերջապէս յուզուած, դողդոջուն ձայնով ասաց.

— «Շնորհակալ եմ ձեզանից, ողորմած տէր իմ. դուք չափազանց մեծ ուրախութիւն էք պատճառում խեղճ ծերուկիս. ես թէ և ողջ կեանքս զանազան մարդոց բարերարութեամբ եմ ապրել, բայց ձեր այս վերջին բարերարութիւնը բոլորի պսակն է: Միայն խնդրում եմ ձեզ, ժամանակ տաք փոքր ինչ լաւ մտածելու, երբ միայնակ կը մնամ, լաւ կը մտածեմ և ձեզ վճռական պատասխան կը տամ»:

— «Կարող էք հանգիստ օրտով մտածել, յարգելի ծերունի, շտապելու ոչինչ չը կայ», ասաց պարոն Զօնը և տեսնելով որ ծերունին արդէն յոգնել է, բարեկամաբար սեղմեց նորա ձեռքը և հեռացաւ:



... րոյ զյո ծանոցոյ ըմբարձ և յայնպէս...  
... անուամբս զՅ. մովսէսայից և ծնն քանարայս զար  
... ցան ճարամար պատմի չիտ մի յի սի անկեացն ծրծի  
... միջի մի այս ցնն քան զճոյս և յնամկեացողոցս ըստ

**Է.**  
**Լ**աւ մտածելուց յետոյ, Թոմասը յայտնեց Ջոնին որ խորին շնորհակալութեամբ ընդունում է նորա առաջարկութիւնը: Պարոնը տարաւ ծերունուն օջ. մոյցոյց տալու նորա բնակարանը և ծանօթացրեց պառաւ Բէնսօնի Հետ: Պառաւն ասաց, որ ինքը և իւր եղբօր աղջիկը ամեն կերպ կ'աշխատեն որ ծերունուն լաւ պահպանեն, իսկ ծերունին միշտ կ'ընունէ էր. «Ո՛հ. դուք շատ բարի էք, քոյրիկ. ո՛ւ կարող էր մտածել, որ զառամեալ Հասակումս այսպիսի բաղբի կ'արժանանամ»:

Ծերունին ուղևորուեցաւ Լօնդոն, Հաւաքեց իւր ունեցածը, և վերջին մնաս բարեն ասաց Կօվէնտ-Հարդէնի ծանօթներին. նոքա շատ ափսոսացին, որ ծերունին յաւիտեանս բաժանվում է իրանցից, բայց և ուրախանում էին, որ լաւ բաղբն է ընկել: Տանտիկինը ցաւում էր, որ զրկում էր այդպիսի Հանդարտ և ազնիւ կենողից: Նորա սիրտը մորմոքուեցաւ, երբ տեսաւ ծերունուն ճանապարհի շորերով կառքը նստած, որը նորան շուտով երկաթուղու կայարանը պիտի Հասցնէր: Վերջին մնաս բարեն ասելիս, պառաւը տուեց ծերունուն Հաց, պանիր և խորված միս, որ ճանապարհին կերակրի նեղութիւն չը քաշէր:

Այժմ կարող ես իմանալ, ընթերցող, թէ Բնչ էք գգում Իիկը, երբ մտածում էր, որ իւր Հին բարեկամը պէտք է միշտ Իէնգամում բնակուէր. նա անհամբեր սրտով սպասում էր այդ բաղդաւոր օրին:

Հոկտեմբերի վերջերին Թոմասն եկաւ պառաւ Բէնսօնի տուն, ուր ամէն բան պատրաստ էր նորան ընդունելու Համար: Պարոն Ջօնը ծերունու յետեից կառք էր ուղարկել երկաթուղու կայարանը: Իիկը ուրախ ուրախ ուղեկցում էր Թոմասին դէպի նորա նոր բնակարանը, ուր նորան վաղուց սպասում էր տաք տաք թէյը յատուկ նորա Համար պատրաստուած հիւրասենեակում:

Պառաւ Բէնսօնը և իւր եղբօր աղջիկը ամեն կերպ աշխատում էին, որ լաւ պատիւ տան ծերունուն: Բայց ծերունին, որ սիրում էր ամեն բան իւր ձեռքով անել, խնդրում էր որ գոնէ այսուհետեւ այնքան նեղութիւն չը քաշեն իւր Համար:

Ծերունի Թոմասը շուտով ընտելացաւ իւր գիւղական նոր բնակարանին. այդ տեղ նորա Համար շատ լաւ էր. Հարեանները շատ յարգում էին բարի ծերունուն, որը պատրաստ էր ամբողջ օրերով նստել և հսկել հիւանդ մանկան անկողնու մօտ, կամ լաւ գիրք կարդալով, քաղցրացնել Համեստ գիւղականի Հանգստութեան ժամերը:

Ջօրջ Բէնտամը Հասակն առնում էր, բայց չէր փոխվում դէպի լաւը: Նա այնպէս վատ էր կատարում իւր պարտաւորութիւնները, որ Նէյլօրը վաղուց արդէն կարձակէր նորան, եթէ պարոն Ջօնը չը լինէր, որը կարեկցելով նորա թշուառ դրութեանը, չէր արձակում,



լաւ իմանալով, որ մանուկը ուրիշ տեղ ծանայելիս, չէր կարող այնպիսի ռոճիկ ստանալ, որպիսին ինքն էր վճարում: Բայց թէ պարոն Զօնը և թէ Նէյլօրը ամենևին չը գիտէին, որ մանուկը ատոււմ էր Դիկին: Եւ Դիկն այնքան բարի էր, որ իւր քաջած նեղութիւնների մասին ոչոքի չէր պատմում, բացի Թոմասից:

— «Ես նորան երբէք վնաս չեմ տուել, ասաց մի անգամ Դիկը ծերունուն. իսկ նա միշտ աշխատում է ինձ վնասել: Ես էլ շատ համբերելուց լետոյ, վերջն այնպիսի բան կը բերեմ նորա դէսին, որ լաւիտեանս չը մոռանայ»:

— «Համբերիր, սիրելիս, համբերիր, ընդհատեց նորան Թոմասը: Ես չեմ կարող այդպիսի խօսքեր լսել քեզանից. մի՞թէ դու չես իմանում, որ այդ կը լինի «ակն ընդ ակուն և ատամն ընդ ատաման»: Ձէ, սիրելիս, մեր Երկնային Վարդապետը այդպէս չէր անում, երբ չարասիրտ մարդիկ աշխատում էին վնասել նորան: Նա ոչ թէ նոցանից վրէժխնդիր էր լինում, բայց ընդ հակառակն՝ աղօթում էր նոցա համար: «Ներիր ուրիշին նորա լանցանքը, և կը ներուի քեզ քոնը», պատուիրում է Սուրբ Դիրքը»:

— «Ո՛րքան կարող եմ, կ'աշխատեմ, ականայ ասաց Դիկը, վշտացած ծերունու խօսքերից:

— «Ներիր նորան, բարեկամ, ներիր. ես շատ լաւ գիտեմ, որ այդ դժուար է անել, մարդս թոյլ արարած է, բայց դու ներիր Զօրջ Բէնտամին, և եթէ կարող ես, աշխատիր նորան բարութիւն անել: «Բարի արարէք ատելեաց ձերոց» լիջում էս թէ ով է սովորեցրել մեզ այս խօսքերը»:

— «Բայց ես ինչ լաւութիւն կարող եմ անել նորան, հարցրեց Դիկը. ես մինչև անգամ չեմ էլ մօտենում նորան: Ես նորան ոչինչ լաւութիւն չեմ կարող անել»:

— «Ինչո՞ւ չէ, որդեանկ. օրինակի համար եթէ նորան հարկաւոր լինի որ և է մարդու օգնութիւն, դու ինքդ կարող ես օգնել նորան»:

Մինչև նոքա այսպէս քաղցր գրոյց էին անում իրար հետ, արդէն միջնում էր և Դիկը պիտի սուռն գնար. և երբ ուզում էր մնաս բարեւասել, Թոմասը նորա խօսքը կտրեց, ասելով.

— «Մի փոքր էլ սպասիր, որդեանկ, և ես քեզ կը պատմեմ մի դէպք, որից դու կ'իմանաս, թէ ինչ վատ բան է վրէժ առնելը: Այս պատմութիւնը կը սովորեցնի քեզ, թէ չը պէտք է ոչոքից վրէժ առնել: Թէ և այս շատ տխուր դէպք է, բայց դու պէտք է լաւ լսես: Իսկ ես, մինչև անգամ այնքան տարիներից լետոյ էլ, ականց խզճահարութեան չեմ կարողանում լիջել այդ դէպքը:

Դիկը հանգիստ նստեց իւր տեղը:

— «Երիտասարդ հասակումս ես շատ էի սիրում ձիաներ, շարունակեց ծերունին, և երբէք չէի հեռանում նոցանից: Հայրս ցանկանում էր, որ ես գիւղական վարժապետ դառնամ, և ճշմարիտն ասած, ես աւելի լաւ ուսում էի առել, քան թէ իմ հասակակից աղայքը: Բայց ես ուզում էի անպատճառ ձիայան դառնալ և ոչինչ բան չէր կարող արգելել ինձ կատարելու իմ սրտիս ցանկութիւնը: Հայրս համաձայնուեցաւ և յայտնեց այս բանը մի կալուածատիրոջ, որը ընդունեց ինձ իւր մօտ,



իրբև կառապան: Կարճ ժամանակում ես այնպէս ընտելացայ, որ ամենափորձուած կառապանիցն էլ լաւ էի ձի նստում. բայց յանկարծ իմ տէրս մեռաւ և ես զրկուեցայ պաշտօնիցս, և վերադարձայ տուն: Այս միջոցին իմ ընկերակից և մեր հարևան Ջէյմս Բէննէտը նոյնպէս զրկուել էր իւր պաշտօնից և վերադարձել էր գիւղը: Նա էլ կառապան էր մի հարուստ պարոնի մօտ, և թողել էր պաշտօնը, որովհետև պարոնը գնացել էր օտար երկիր»:

— «Ողջ մեր մանկութիւնը Ջէյմսի հետ միասին էինք անց կացրել, բայց վերջին երեք տարին ոչ մի տեղ չէինք տեսնուել միմեանց հետ, որովհետև Ջէյմսը գնացել էր օտար երկիր: Բայց այժմ մենք ամենայն օր տեսնում էինք միմեանց հետ»:

— «Մի անգամ եկաւ մեզ մօտ մեր հարևանը և յայտնեց որ մի պարոն, Անդերսօն անունով, ցանկանում է կառապան վարձել և խորհուրդ տուեց ինձ իսկոյն գնալ նորա մօտ: Այդ միջոցին Ջէյմս Բէննէտը նստած էր մեզ մօտ. լսելով այդ խօսքերը, նա առանց ձայն հանելու, իսկոյն վեր կացաւ և դուրս գնաց: Ես շորերս փոխեցի և ոտով գնացի Նիւտօնս-Քօլ փողոցը, ուր բնակվում էր Անդերսօնը: Ես իմացել էի, որ այդ պարոնը շատ լաւ մարդ է և այդ պատճառաւ աւելի ևս ցանկանում էի նորա մօտ ծառայել: Որովհետև նորա նախկին կառապանը նոր էր հրաժարուել, ես հաստատ հաւատացած էի, որ այն տեղը անպատճառ ինձ կը մնայ: Պարոն Անդերսօնը ինձ հաւանեց, բայց ասաց որ հէնց իմ գնալուց մի քանի ընդէ առաջ եկել է մի ե-

րիտասարդ և խնդրել կառապանի տեղը և ինքը նորան արդէն խօսք է տուել: «Շատ կարելի է, դուք նորան ճանաչում էք, ասաց նա. նորա անունն է Ջէյմս Բէննէտ և նա ձեր գիւղիցն է»:

— «Այս խօսքերը լսելիս, բոլոր մարմնովս զողացի: Ես շփոթուած էի և զարմացած, մանաւանդ որ շատ լաւ հասկանում էի, թէ այս բոլորը ում արածն էր: Ջէյմսը մեր տանը նստած լսում էր, երբ մեր հարևանը պատմեց կառապանի մասին: Ջէյմսն իսկոյն կամացուկ դուրս է գալիս տնից, լծում է սայլակը և ինձանից առաջ հասնում է պարոնի տուն»:

— «Ես հեռացայ պարոնի տնից բարկացած և զայրացած, ի սրտէ ատելով Ջէյմսին նորա վտտ արարմունքի համար: Գալով գիւղը, ես չը կարողացայ համբերել և լաւ անպատուեցի նորան: Բէննէտը չէր կարողանում արդարանալ և բոլոր մեղը ձգում էր բաղբի ու պատահմունքի վրայ»:

— «Եւ այդպիսով Ջէյմսը մտաւ ծառայութիւն, իսկ ես նորա շնորհիւ ստիպուած էի պարապ ման գալ: Ես կատաղում էի, երբ տեսնում էի, թէ ինչպէս այն անպիտանը պարոնի սեւթոյր ձիաներին հեծած՝ տանում էր աղբիւրը ջուր խմեցնելու»:

— «Անդերսօնը մի հիւանդ աղջիկ ունէր, որին բժիշկները խորհուրդ էին տուել ձիով ման գալ: Հայրը գնել էր նորա համար մի հրաշալի արաբական ձի, բայց որովհետև նոր առած ձին խրտնում էր, ուստի դեռ ևս չէր կարելի հեծնել նորա վրայ: Մեր գիւղի և Անդերսօնի կալուածքի մէջ տեղը, ճանապարհի մօտ կար մէկ



աւագան. շատ մեծ դժուարութեամբ կարելի էր ստիպել ձիուն մօտենալ աւագանին: Ի գո՛ւր տեղը Անդերսօնը և նորա առաջուան կառապանը աշխատում էին ընտելացնել նորան ջրին, բայց չը կարողացա՛ւ: Ձէյմսը խոստացաւ ուղղել ձիուն և վստահաբար սկսեց գործը»:

— «Ամեն օր Ձէյմսը ձի հեծած ման էր գալիս և կամաց կամաց այնպէս ընտելացրեց նորան, որ ձին ամենեւին չէր խրանում: Ես տեղեկացայ, որ մէկ երկու օրից յետոյ ամենքը պէտք է գովեն Ձէյմսին, որ նորան յաջողել է ուղղել ձիու բոլոր պակասութիւնները»:

— «Այնուհետև էլ բարկութիւնիցս չէի իմանում թէ քնչ անեմ: Անպատճառ կամենում էի, որ մի կերպով վրէժս առնեմ Ձէյմսից: Ես նախանձում էի, որ նա կարողացաւ ընտելացնել ձիուն, որովհետև լաւ գիտէի, որ ես նորանից պակաս ընդունակ չէի ձի հեծնելուն և հէնց այս միջոցին կարծես թէ չար ոգին ինձ ասում էր, որ ժամանակն է վնասել իմ տտելի թշնամուն: Ես գնեցի մի քանի վառօդի փամփուշտներ, դրի գրպանս և Ձէյմսի գալուց մի փոքր վաղ գնացի աւագանի մօտ: Ես թագնուեցայ մի ցանկապատի ետևից և հանեցի գրպանիցս վառօդի մի փամփուշտ: Ես ուզում էի այնպէս խրտնացնել ձիուն, որ նա միշտ վախենար ջրից: Այդպիսով, մտածում էի ես, Ձէյմսի աշխատանքը գո՛ւր կանցնի և նա կընկնի Անդերսօնի աչքից: Ես կպայ ցանկապատին այնպէս, որ ինձ ոչ ոք չը տեսնի: Մի քանի րոպէից յետոյ ես լսեցի ձիու տրոփիւն: Զիւարթը Ձէյմսն էր: Առաջ նա մօտենում էր տրոփտրոփ, ապա ոստ-ոստ, վերջը՝ — արագ: Զին բոլորովին

հանդարտ էր: Եւ նա հազիւ մօտեցել էր աւագանին, ես արձակեցի պատրաստի վառօդի փամփուշտը...: Այստեղ ահա՛ խեղճ կենդանին խրտնեցաւ և կանգնեց ետևի ոտքերի վրայ: Ապա իջարծես մի նետ կամ մըրրիկ անհետացաւ իմ աչքից»:

— «Այլ ևս ձիւարթը չէր երևում, միայն օդում լսվում էր ձիու սաստիկ տրոփիւնը և ինչպէս երևում էր, գլուխը կորցրած ձիւարթը այլ ևս չէր կարողանում սանձահարել կատաղած կենդանուն»:

— «Աստճուն էլ յայտնի է, որ ես ամենեւին չէի ցանկանում Ձէյմսի մահը. միայն իմ ցանկութիւնս այն էր, որ ձին առաջուան պէս վախենար ջրից: Ես կարծում էի, որ Ձէյմսին ո՛չ մէկ դժբաղդութիւն չէր կարող պատահել. ես գիտէի, որ նա լաւ ձի հեծնող է, և յոյս ունենալով, որ նա ժամանակին կարող է սանձահարել ձիուն, հանգիստ սրտով գնացի տուն, ուրախանալով, որ վերջապէս կարողացայ վրէժս առնել իմ ատելի թշնամուց»:

— «Մենք վերջացնում էինք ճաշը, երբ ներս մտաւ մեր հարևանը և հարցրեց, թէ արդեօք նորութիւն չենք լսել: Նա պատմեց, որ Ձէյմս Բէննէտը տարել է ձիուն ջուր խմեցնելու, որ ձին խրտնել է և Ձէյմսին վայր է ձգել մի մեծ քարի վրայ, որ մարդիկ օգնութիւն են հասել և վեր են կացրել Ձէյմսին բոլորովին ուշաթափ և կարծում են, որ նա երկար չի ապրել: Նորան տարել են մօտիկ գիւղական խրճիթը և բժիշկն էլ այլ ևս յոյս չունի, թէ նա կ'առողջանայ: Դու ինքդ դատիր, սիրելի Դիկ, թէ ո՞րքան ծանր էր ինձ լսել հա-



ընանի պատմած տխուր անցքը, որի պատճառը ես էի: Երբ իմացայ Ջէյմսին պատահած զժբաղդութիւնը, կարծում էի թէ սպանութիւն եմ գործել: Ես սարսփեցայ, երբ մտածեցի, որ իմ գործած անարդ լանցանքը ընկերոջս մահուան պատճառ է դառնում»:

— «Ի հարկէ, ես ոչոքի չը պատմեցի իմ վատ արարմունքի մասին, մտածելով որ միևնոյն է, դորանով հիւանդի տանջանքները չեն թեթևանալ: Երեկոյեան ես շտապով գնացի այն գիւղական խրճիթը, ուր պառկած էր հիւանդը, իմանալու Ջէյմսի առողջութիւնը: Ինչ ասացին, որ հիւանդը առաջուայ պէս դեռ ուշքի չէ եկել: Նորա ծնողներն էլ տխուր արտում նստած էին այնտեղ: Այդ ժամանակ եկաւ պարոն Անդերսոնը, որը իւր հետ բերել էր մի ուրիշ բժիշկ: Տեսնելով որ հիւանդին լաւ են խնամում, ես մի փոքր հանդարտուեցայ»:

— «Միւս օրը հիւանդը թէ և ուշքի եկաւ, բայց շատ թույլ էր»:

— «Սէկ ամբողջ շաբաթ տանջվում էր խեղճը: Մի քանի օրից լետոյ բժիշկը յայտնեց, որ թէ և հիւանդը ազատուեցաւ, բայց դեռ երկար ժամանակ անկարող կը լինի աշխատելու: Անդերսոնը այնքան բարի էր, որ լանձն առաւ վճարել Ջէյմսի բոլոր ռոճիկը, մինչև նորա առողջանալը. բայց միևնոյն ժամանակ յայտնեց, որ ստիպուած է այժմէն իսկ նորա տեղը ուրիշ կառապան վարձել. Եւ այդ կառապանը ես էի լինելու»:

— «Ի հարկէ, ես բոլորովին հրաժարուեցայ այդ պաշտօնից, որով շատ զարմացրի պարոն Անդերսոնին»:

Այդ զժբաղդութիւնից լետոյ խիղճս այնքան տանջում էր ինձ, որ բոլորովին մտքիցս հանեցի երբ և իցէ կառապան դառնալու: Մինչև անգամ ձի տեսնելիս, բոլոր մարմնովս դողում էի»:

— «Այս անցքից մի փոքր լետոյ ես մտայ ծառայելու մի պարոնի մօտ, որ երկու տարով պիտի ճանապարհորդէր օտար երկիր: Ես յայս ունէի օտարութեան մէջ ամեն բան մոռացութեան տալու, բայց շատ սխալուեցայ: Ես համոզուեցայ, թէ որքան անգութ և անազնիւ էի վարուել Ջէյմսի հետ և այս միտքը տանջում էր և մինչև այժմս էլ տանջում է խիղճս»:

— «Այս բոլորը պատմեցի քեզ, որդեակ, նորա համար, որ քո մատաղ սրտից բոլորովին հանես վրէժ առնելու չար միտքը: Այժմ գնա՛ տուն. թող Աստուած պահպանէ և ազատէ քեզ ամեն փորձութիւնից և չար մտքերից»:

Ծերունին շատ յարմար ժամանակը պատմեց այս բանը, որովհետև Դիկը կրկին ստիպուած էր վրէժ առնել Զօրչից նորա վատ արարմունքի համար:



նորմատ մազմար սմբոյոյ րոմոյ րիմովեթորաչեք րիմ  
 չեք մ չցոմ զքմամ ուրիցոմ միկոնոյոց րո չմի րճ  
 սիլմնոմ զճ կարմա մչնմ Մ ւոյաւնոյոց մոյրա ուր  
 չեմ նարաք սիմնցոմ զոյոյ

**Ը:**

Ջօրջ Բէնտամը պարտաւոր էր ամեն երեկոյ նշա-  
 նակած ժամին փակել ծաղկանոցի պատու-  
 Հանները: Նէյլօրը խտուրթեամբ պահանջում  
 էր այդ: Երկու անգամ Ջօրջը մոռացել էր  
 նշանակած ժամին փակել պատուհանները և այդ պատ-  
 ճառաւ էլ պարտիզպանից խիստ լանդիմանութիւն էր  
 ստացել: Բայց երբ նույնը կրկնուեցաւ երրորդ անգամ,  
 Նէյլօրը այդ գործը յանձնեց Դիկին, Ջօրջի առաջ  
 պարզ յայտնելով, որ այս բանում բոլորովին վստահ է  
 նորա վրայ:

Ջօրջը ոչինչ չասաց, բայց սրտով սաստիկ նախան-  
 ձեց Դիկին: Նա հեռացաւ, մտածելով թէ մէկ քնչպի-  
 սի հնարք գտնի, որ Նէյլօրի առաջ վայր ձգի Դիկի  
 պատիւը: Յարմար միջոցը շուտով գտնուեցաւ:

Մի անգամ Դիկը երբ նշանակած ժամին փակել  
 էր պատուհանները և հանգիստ նստած թէյ էր խմում,  
 շատ զարմացաւ, երբ յանկարծ Նէյլօրը յանդիմանեց  
 նորան, թէ ծաղկանոցի պատուհանները չէ փակել:

— «Հաւատացնում եմ ձեզ, որ բոլոր պատուհան-  
 ները փակեցի», արդարանում էր խեղճ մանուկը:

— «Կարելի է գու կամենում էիր փակել, բայց չը

փակեցիր, ասաց Նէյլօրը: Խնդրեմ մի արդարանար: Ա-  
 ւելի լաւ է պարզ խոստովանիր և ասա որ ուրիշ ան-  
 գամ չես մոռանալ կատարելու իմ հրամանը. այն ժամա-  
 նակ գոնէ ես հանգիստ կը լինիմ»:

Դիկը լռեց: Նա հաստատ հաւատացած էր, որ  
 փակել է բոլոր պատուհանները և զարմանում էր, թէ  
 քնչպէս պատուհաններից մէկը բաց են տեսել: Եւ  
 ճշմարիտ որ ճաշից լետոյ ոչ ոք չէր մօտեցել ծաղկա-  
 նոցին: Սովորաբար Դիկը երբ ծաղկանոցից դուրս էր  
 գալիս, միշտ կողպում էր դուռը, բայց բանալին  
 թողնում էր դռան վրայ, որպէս զի Նէյլօրը երեկոյեան  
 տուն վերադառնալիս, վերցնէր բանալին: Վերջապէս  
 մանուկն այն մտքին եկաւ, թէ գուցէ մոռացմամբ  
 ծայրի պատուհանը բաց էր թողել:

Մի շաբաթից լետոյ օրերն սկսեցին ցրտիլ և Դի-  
 կին հրամայուեցաւ պատուհանները սովորականից աւել-  
 լի վաղ փակել: Նա ամենայն ճշտութեամբ կատարում  
 էր հրամանը:

Մի երեկոյ տուն վերադառնալուց առաջ, Նէյլօրը  
 ման եկաւ բոլոր ծաղկոցները և որովհետեւ ցրտերն ար-  
 գէն վրայ էին հասել, այդ պատճառով էլ նա աւելի  
 եռանդով էր ինամում ծառերն ու ծաղիկները:

Երբ մօտեցաւ առաջին ծաղկանոցի դռանը, նա  
 լսեց մի թեթեւ խշշոց: Բայ արաւ դուռը և ներս նայեց.  
 միայն ոչինչ չը գտնելով, կրկին փակեց դուռը և գնաց,  
 կարծելով թէ խշշոցը միայն իրան էր թւում: Մի փոքր  
 առաջ գնալով, Նէյլօրը տեսնում է, որ ծայրի պա-  
 տուհանը բաց է:



— «Դարձեալ», մտածեց նա. «Գիկն էլ այնպիսի մոռացկոտ անպիտանն է եղել, ինչպէս և Զօրջը: Այսուհետեւ նորա վրայ էլ չի կարելի յուսալ»:

Նէլլօրը փակեց պատուհանը. այս անգամ նա նորից լսեց առաջուան խշշոցը. նա սկսեց ականջ դնել, բայց այլ ևս ոչինչ չէր լսվում: Վերադառնալով տուն, նա սաստիկ յանդիմանեց Դիկին, յայտնելով, որ նա այլ ևս թող նեղութիւն չը քաշի ծաղկանոցի պատուհանները փակելու, որովհետեւ գնդ է, նա չի կատարիլ իւր հրամանը: «Եթէ ես ինքս չը գնայի և իմ ձեռքովս չը փակէի պատուհանը, քո շնորհիւ ամենահազուագիւտ ծաղիկներից մինը պէտք է փչանար», աւելացրեց գայրացած պարտիզպանը:

— «Երդուում եմ ձեզ, որ ամէն մէկ պատուհանը ես շատ ամուր փակեցի, բացականչեց Դիկը: Ես պատրաստ եմ Աստուծոյ անունով երդուելու, որ ինձանից լետոյ մի ուրիշը գնացել է և դիտմամբ բաց արել: Այդ ամենը չար մտքով են անում, որ ինձ վնասեն»:

— «Աւելորդ խօսքեր են, ատաց պարտիզպանը. դու դոցանով չես կարող արգարանալ»:

— «Ես արգարանալու համար չեմ ասում, բայց հաւատացնում եմ ձեզ, որ ամէն մէկ պատուհանը ամուր իմ ձեռքովս եմ փակել», հեկեկալով ասում էր մանուկը:

— «Դուքէ գա ճշմարիտ է ասում, նկատեց Նէլլօրի կինը, որը որդու պէս սիրում էր Դիկին և ամեն բան հաւատում էր նորան: Շատ կարելի է մէկը նորա հետ թշնամութիւն ունի և ուզում է վնասել նորան»:

— «Միթէ դու կարծում ես, որ թշնամիներ էլ ունիս», հարցրեց Նէլլօրը:

— «Այո, ես հաւատացած եմ որ ունիմ, պատասխանեց Դիկը:

— «Սոս, ուրեմն, ո՞վ է այդ թշնամին»:

Դիկը չը պատասխանեց. նա ոչոքի չէր ուզում մատնել, բայց փոքրիկ Տօմմին, որ եղբօր հետ նստած էր այնտեղ, աղաղակեց.

— «Զօրջ Բէնտամն է նորա թշնամին. երեկ նա ասում էր, որ սաստիկ ատում է Դիկին, որովհետեւ դ՞ու, հայրիկ, դորան սիրում ես և ծաղկոցների պատուհաններ փակելը դորան յանձնեցիր»:

Մէկ ինչ որ միտք անցաւ այդեպանի գլխով. նա շտապով վեր կացաւ, վերցրեց վառած լապտերը և առանց մէկ խօսք ասելու դուրս գնաց:

Նա մօտեցաւ ծաղկանոցին, բաց արաւ դուռը և ներս մտաւ: Նա նորից լսեց առաջուան թեթեւ խշշոցը: Նէլլօրն այլ ևս չէր կասկածում, որ մէկը թագնուած էր այդ տեղ և եռանդով սկսեց որոնել նորան: Ծաղկանոցը շատ մեծ էր, ուստի նա երկար ժամանակ պտրտում էր ամէն մի անկիւնը, բայց ոչ ոք չէր երևում: Վերջապէս Նէլլօրը բարձրացրեց լապտերը և նայեց պատից կայրած երկայն տախտակներին:

Տախտակների վրայ պարզ երևում էր մի մարդկային մութ պատկեր: Դա Զօրջ Բէնտամն էր: Նորա երեսի գոյնն այնպէս թուել էր, կարծես գետնից հանած մեռել լինէր: Առաջին կանչելուն պէս նա մօտեցաւ Նէլլօրին:



— «Ի՞նչ ես շինում», որոտաձայն հարցրեց պարտիզպանը:

— «Ինձ այստեղ փակեցին», պատասխանեց նա դողալով:

— «Ինչո՞ւ էիր այստեղ մտել»:

Ջորջը լուռ էր. նա ամբողջ մարմնով դողում էր:

— «Եթէ դու չես ուզում ասել, ուրեմն ես կասեմ քեզ, շարունակեց պարտիզպանը: Դու եկար պատուհանը բաց արիր, որ ես Դիկին լանդիմանեմ նորա ծուլութեան համար: Դու սորանով արդէն երկրորդ անգամն ես վնասում քո անմեղ ընկերոջը: Արի՛ ինձ հետ. պարոն Ջոնը քեզ կ'ասէ, թէ այդ քո վատ աղբը ինչի՛ արժանի է»:

Պարոն Ջոնի անունը լսելիս, Ջորջը աղիտղորմ ձայնով գոռաց.

— «Դուք ինքներդ պատժեցէք ինձ, թէկի՞նչ սպանեցէք, մորթեցէք ինձ, բայց թէ Աստուած կը սիրէք, ինձ մի տանէք պարոն Ջոնի մօտ, աղաչում եմ ձեզ»:

Նէյլօրը անողոք էր. նա տարաւ Ջորջին ազնուականի մօտ:

Հեշտ է հասկանալ, թէ վեհանձն ազնուականը ինչպէս գայրացաւ, երբ իմացաւ, թէ ինչ էր մանկան լանցանքը: Ջորջը խոստովանեց, որ Դիկը նորան ոչինչ վատութիւն չէ արել, բայց թէ ինքը անմիտ նախանձից զրդուած, ուզում էր վնասել նորան:

Պարոն Ջոնը այնպիսի պայծառ գոյներով նկարագ-

րեց Ջորջի լանցանքը, որ այդ տխուր օրուայ լիշատակը անջնջելի մնաց նորա սրտում:

Դիկը ուրախացաւ, երբ լսեց որ ամենքին յայտնի եղաւ, թէ ո՞վ էր ծաղկանոցի պատուհան բաց անողը: Բայց պէտք է ասել, որ ազնուասիրտ Դիկը հոգւով ցաւում էր, որ Ջորջը զրկուեցաւ իւր պաշտօնից: Դիկը կամենում էր խնդրել Նէյլօրից, որ նորից ընդունել տար Ջորջին, բայց գիտէր որ իւր խնդիրը ի գո՛ւր էր: Պարոն Ջոնը և գլխաւոր պարտիզպանը սաստիկ զայրացած էին: Սակայն մի քանի ժամանակից յետոյ, երբ ամենքը հանդարտուեցան, և Դիկը տեսնում էր, որ Ջորջը անգործ թափառում է և ամենքը ծաղրում են նորան իւր վատ արարմունքի համար, նա այնպէս խղճաց նորա վրայ, որ այլ ևս չը համբերելով, վերջապէս սիրտ առաւ և խնդրեց Նէյլօրից, որ սա միջնորդէ պարոն Ջոնի մօտ կրկին ընդունելու Ջորջին:

— «Դու նորա համար ես խնդրում, անմիտ պատանի», հարցրեց պարտիզպանը:

Բայց չը նայելով այս անխելքութեանը, ինչպէս ասում էր Նէյլօրը, նա այնուամենայնիւ գնահատեց Դիկի բարեսրտութիւնը և կատարեց նորա ցանկութիւնը, խնդրելով պարոն Ջոնին, որ կրկին ընդունէ Ջորջին: Նէյլօրը յայտնեց Ջորջին, որ նորա ընդունուելու միակ պատճառը՝ Դիկն էր:

Ջորջ Բէնտամը իրեն պատահած դժբաղդութեան օրից սկսած, միշտ խուսափում էր Դիկից. բայց երբ իմացաւ նորա վեհանձն արարքը, բոլորովին փոխուեցաւ և հազար անգամ շնորհակալութիւն էր անում Դիկին, յայտ-



նելով որ շատ ցաւում է և զղջում իւր անպիտան արարմունքի համար: Այդ օրուանից երկու պատանիները ամենամտերիմ բարեկամները դարձան: Զօրջը միշտ մտածում էր, թէ ինչ անի, որ օգտակար լինի Դիկին: Այդ օրուանից սկսած Զօրջ Բէնտամն աշխատում էր բարի և ազնիւ մարդ դառնալ:

\* \*

Մենք լուռութեամբ պէտք է անցնենք Դիկի կեանքի մնացած տարիները, և կ'ասենք միայն, որ նա արդարացրեց բարեկամների իւր վրայ դրած յոյսերը: Դիկը պարտիզպանութեան մէջ կատարելագործուեցաւ, և ընտելացաւ այնպիսի զեղեցիկ և կանոնաւոր պարտէզներ շինելուն, որոնք միայն Անգլիայումն են լինում: Պարոն Զօնն ու Նէյլօրը խորհուրդ էին տալիս նորան յատկապէս պարտիզպանութեամբ պարապելու և ամեն կերպ օգնում էին այս աշխատասէր և շնորհալի երիտասարդին:


Երբ որ նա շատ լաւ սովորեց պարտիզպանութեան արուեստը, պարոն Զօնը ծանօթացրեց նորան իրան ծանօթ մեծատունների հետ և ազնուամիտ ու ջանասէր երիտասարդը բարեխղճաբար և եռանդով աշխատելով, ձեռք բերեց բարի անուն և ասպնջով կեանք և այս բոլորը մի փայլուն և շնորհիւ:

Ծերունի Թոմասի ուրախութեանը չափ չը կար: Նա այնքան ապրեց, մինչև որ Դիկը պսակուեցաւ, տուն ու տեղի տէր դարձաւ, և այն ազնիւ ու իմաստուն

խրատներին էր հետևում, որը փոքրուց սովորեցրել էր նորան պատկառելի ծերունին:

Թոմասը հասաւ մինչև խորին ծերութեան և նորա մահը նույնպէս խաղաղ և հանգիստ էր, ինչպէս և նորա կեանքը: Նորա մարմինը հանգստանում է Դէնգամի գերեզմանատանը, հասարակ շիրմի մէջ: Շատերը յարգանքով են լիշում պատկառելի և բարի ծերունուն: Պարոն Զօնը, որ բաւականին ծերացել է, մտաբերելով ծերունի Թոմասին, միշտ կրկնում է.

— «Հանգիստ սկորներիդ, պատկառելի ծերունի: Ծայ Աստուած, որ իմ կեանքիս վերջն էլ նույնպէս խաղաղ և հանգիստ լինի, ինչպէս քոնը»:





յնկարագրուս քաղցրի զոս նուսումն զի միջմաստով  
 : միւսողն իյնուսիտար մաղոմ զի  
 -ում ու մամիւղոն միգոմ մեմն ասա՛ զսոնն  
 ու ուրչնի զի տարնա՛ զ քարա՛ սխալում յշան աղ  
 -մի՛ ի նուսումնա՛ն զմիկնդան աղոմ զցմամի աղոմ  
 զղմա՛ն : ին միկնից քաղասա՛ն զմասումանքնիք ինար  
 մուսումնողն իգա՛ն զ իյնուսիտար նուրի մմ իոցմարդալ  
 իոնկնկանն ի յնրաղն միմախաւաղ զո զմե՛ն մաղա՛մ  
 ի նուսմիկն աղիկն միսանն ի մուսողն  
 միւսողն իյնուսիտար զիկնմիկն ու միքմա՛ն :  
 -ալ սխալում ի միկնի սիցմամի նի զո ճուսումն յան  
 : ողմոց սխալմի ի միկն տարնա՛ն զ քար









181

0004274

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004274



